



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material



Ն. ԻՎԱՆՈՎ

ՀԵՏԵՎԱԿԱՅԻՆ ≡  
≡ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ  
1980




356:355.42 Ն. ԻՎԱՆՈՎ

Ի

ՀԵՏԵՎԱԿԱՅԻՆ ≡

≡ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԿԿԿ  
16277A



ՀԱՅԱ. ԳԻՎ. ՀԱՂԱՐԱՇՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



Ն. Պ. ԻՎԱՆՈՎ.—«Հետևակային պահպանութ-  
 թյունը»: Այս գրքում խոսվում է հետևակային մաս-  
 րի պահպանության կազմակերպման մասին՝ յերթի և  
 մարտի ժամանակ և պահպանության առանձնահատ-  
 կությունների մասին՝ առանձին դեպքերում, որինակ  
 անտառում, լեռներում, տափաստաններում: Բացի դը-  
 րանից գործնական խորհուրդներ են տրվում պահպա-  
 նության միջի մարտիկին և ջոկի հրամատարին: Պա-  
 րանության խնդիրը լիակատար կերպով յուրացնելու  
 համար լավ կլինի կարդալ «Библиотека красноар-  
 мейца»-ի սերիայից նույնպես հետևյալ գրքույկները՝  
 Белолипецкий.—«Пехота на походе», Ордынский.—  
 «Ногной поход», «Служба в бою», Гуров.—«Стрель-  
 ковое отделение в бою».

## Ի. ԻՆՉ Ե ՊԼԱՊԼՆՈՒԹՅՈՒՆԸ

Շարժվելու և տեղում դասավորվելու բոլոր դեպքերում հետևիակը պետք է հիշի հետախուզության և պահպանության մասին: Վորքան ել հեռու լինի հակառակորդը, միշտ ել կարելի չե նրա կողմից հանկարծակի հարձակում սպասել:

Պահպանությունը թույլ չի տա իմանալ, թե մենք ինչպիսի ուժեր ունենք և ինչպես են նրանք դասավորված, յեթե նա չթողնի թշնամու հետախույզներին մոտենալու մեր հետևիակին:

Պահպանությունը կանդ առնել կտա հարձակվող թշնամուն և մեր պորքերին ժամանակ կտա պատրաստվել հարկ յեղած տեղափոխումները կատարելու:

Յեւ վերջապես, պահպանությունը կանդ առնել տալով հակառակորդին, կտալի նրա սրահապան մասերին յետ քաշվել և կտալի նրա ուժերի և տեղավորման հնարավորությունները: Դրանով պահպանությունը կողմի ստիճի արագությամբ ջախջախելու հակառակորդին:

Արդյոք շա՞տ վորք է հարկավոր այդ բոլոր խնդիրները լուծելու համար:

Այստեղ պետք է տեսնել, թե հակառակորդը վորքան է հեռու, ի՞նչ խնդիր է դրված մեր առաջ և ի՞նչ է ներկայացնում իրենից տեղանքը: Այդ պատճառով ել հետևիակի մեր մարտական կանոնադիրքն ասում է,

վոր պահպանութեանը տրամադրվում է ամբողջ հետե-  
վակի  $\frac{1}{3}$ -ից մինչեւ  $\frac{1}{3}$  մասը, այսինքն՝ գունդը պահ-  
պանութեան համար գուրս եւ բերում մեկ վաշտից մին-  
չեւ մեկ դումարտակ զորք, իսկ գումարտակը՝ մեկ  
դասակից մինչեւ մեկ վաշտ: Պահպանութեանը տրվում  
են զնդացիներն եւ հրետանին, վորպեսզի կարելի լինի  
միանգամից ավելի ձեռնաու պայմանների մեջ գտնվել,  
քան հակառակորդը:

Ամեն մի պահպանութեանը գրվում է այնպիսի հե-  
ռավորութեան վրա, վորը հնարավորութեան եւ տալիս  
ապահովելու պահպան մասերին զնդացիներին կամ  
թեթեւ հրետանու կրակից:

Պարզ եւ, վոր պահպանութեանն իր խնդիրները կա-  
տարում եւ կոչով: Նա իր համարձակ եւ վճռական կրա-  
կով եւ մանր գործասների հարձակումով պետք եւ ձգտի  
կատարելու իր խնդիրը: Յեւ քանի վոր պահպան գո-  
րամասերը կոչվ են մղում ընդարձակ տարածութեան  
վրա, այդ պատճառով եւ նրանք պետք եւ գործեն չրջան-  
ցումներ կատարելով, սակայն առանց նրանցով տար-  
վելով, վորպեսզի չկորցնեն միմյանց հետ ունեցած  
իրենց կրակային կապը (վորպեսզի յուրաքանչյուր գո-  
րամաս կաբողանա կրակ տեղալ իր հարեւանների դեմ  
կոչող հակառակորդի վրա):

Հետեւեալային պահպանութեանը լինում ե յեր-  
թայիմ պահպանութեան, յերբ զորքը շարժվում ե.  
անշարժ պահպանութեան, յերբ զորքը տեղում կանդ  
առնելով հանգստանում ե. մարտական պահպանու-  
թեան, յերբ զորքը մարտի յե պատրաստվում ե բազ-  
մում ե հակառակորդի հետ (հարձակման ե պաշտ-  
պանութեան ժամանակ):

Հետեւեալային պահպանութեանը չպետք ե մոռա-  
նա ողային ե քիմիական պահպանութեան ու քողարկ-

ման մասին: Մարտական քիմիական նյութերը և սովխացիան միշտ ել կարող են անհանգստացնել մեր հեռավակին և հեռավակը պետք է կարողանա նրանցից պաշտպանվել:

## ԱՍՔ ՅԵՎ ԱՆՑԱԲԱՆ

Մթության մեջ կամ մեր տարագով անծանոթ մարդկանց հանդիպելիս շատ դժվար է դիտենալ, թե նրանք իրենց շորերը փոխած մեր թշնամիներն են, թե՞ մեր կարմիր բանակայինները:

Վորպեսզի կարողանանք մերոնց և հակառակորդին միմյանցից տարբերել, պետք է մի առանձին նշան ունենանք, փորն ավելի ճիշտ լինի, քան գինվորական կամ վաչ գինվորական հազուստը:

Դրա համար ել մարտական գործողությունների ժամանակ կան յերկու գաղտնի խոսքեր՝ ասք (ОТЗЫВ) և՛ անցաբան (пропуск)

Այդ յերկու բառերն ամեն ուր փոխվում են և գաղտնի կերպով յուրաքանչյուր ուր հայտնվում են զորքին:

Անցաբանը նրա համար է, վորպեսզի կարողանան նրանով իմանալ, թե այդ մարդն իրենցից է, թե՞ ուրիշ է:

Ասքը նրա համար է, վորպեսզի դրանով կարողանան ստուգել ավագ պետի պատվերով յեկածներին:

Անցաբանը նշանակում են ստգմական կյանքին վերաբերող վորեն ստարկայով, իսկ ասքը՝ վորևե քաղաքի անունով: Այդ յերկու բառերն ել պետք է սկսվեն միևնույն տառով: Որինակ՝ անցաբան՝ «սանձ», ասք՝ «Սարդարաբատ»:

Ասքն ու անցաբանը հաղորդում են կատարելապես գաղտնի կերպով. անցաբանը—պահապան և հետախույզական զորամասերի հրամատարներին՝ մինչեւ



ջոկերի հրամատարներն ու դաշտային պահակների պետերը ներառյալ, ինչպես և դետեկտի մեջ յեղած ավազներին և հետախուզության մեջ յեղած լրատարներին, վորոնք անցնելու յեն անշարժ պահպանության միջից ասքը—պահապան զորամասերի բոլոր հրամատարներին՝ մինչև ուղեկալների պետերը ներառյալ, և հետախուզական զորամասերի բոլոր հրամատարներին:

Բացի դրանից, ասքն ու անցարանը հաղորդում են այն գումարտակներին և վաշտերի հրամատարներին, վորոնք հետախուզության կամ պահպանության մեջ չեն նշանակված:

## II. ՅԵՐԹԱՅԻՆ ՊԼԱՊԼԱՆՈՒԹՅՈՒՆ

Յերթային շարժումը կարող ե լինել հարձակողական, նահանջողական և թեմային:

Հարձակողական շարժում—յերբ զորքը շարժվում ե հակառակորդի վրա դեմ ու դեմ:

Նահանջողական—յերբ մեր զորքն աշխատում ե հակառակորդից հեռանալ:

Թեմային—յերբ մեր զորքը դնում ե հակառակորդի ճակատի յերկայնությամբ, իր կողքը դեպի նրան դարձրած:

Սակայն ամեն տեսակի շարժման դեպքում զորքը պետք ե իր շուրջն ունենա պահպանություն: Միայն թե պահապան զորամասերի ուժը՝ նայած շարժման ուղղությանը փոխվում ե և դեպի հակառակորդի կողմը միշտ ուղարկվում ե ավելի ուժեղ զորամաս:

Գնդից ավելի մեծ զորամասերը (դիվիզիան, կորպուսը) առջևից ուղարկում են ավանդարդ (առաջապահ), իսկ յետևից ունենում են արյերդարդ (վերջապահ):





Նկ. 1 Գրեթե Բաղրամյանի Բաղրամյանի Բաղրամյանի

Գունդը պաշտպանվում է դիտի ջոկատով, յեթե  
յերթը հարձակողական է. կամ կողքի ջոկատով, յեթե  
կատարվում է թեվային շարժում, կամ թիկունքի ջոկա-  
տով, յեթե գունդը նահանջում է: Զոկատներում նշանա-  
կում են մեկ գումարտակ կամ 1-2 վաշտ՝ հրետանու հետ  
միասին (տես պատկ. 1):

Հարձակման ժամանակ թիկունքային պահպանու-  
թյան խնդիրն է յետ շարտել հակառակորդի մանր մա-  
սերի կամ տեղական բնակչու թյունից կազմված թշնամի  
ավազակախմբերի հարձակումը և թիկունքում կարգ  
պահպանել: Գունդը թիկունքային պահպանություն է  
ուղարկում դասակից վոչ ավելի:

Յերթային պահպանությունն իր դիրքերով պետք  
է դրավի շարժման ամբողջ շերտն աչնպես, վոր դիր-  
քերը միմյանց մեջ կարողանան տեսողական կապ պահ-  
պանել (հարևանները պետք է միմյանց տեսնեն):

Յեթե հակառակորդը յերկու անցումից (50—60 կի-  
լոմետր) ավելի հեռավորության վրա յե գտնվում, այդ  
դեպքում պահպան զորամասերը դիրքերն են ուղար-  
կում վոչ թե շարժման ամբողջ շերտի վրա, այլ մի-  
մյան շարժման կողքերը: Նույնն է արվում, յեթե մեր  
առջևում մեր զորամասերը կռիվ են մղում և մենք  
շարժվում ենք դեպի այդ զորամասերը: Այդպիսի դեպ-  
քերում պահպանության մեջ նշանակվող զորամասերը  
կլինեն ավելի քիչ:

### III. ՅԵՐԹԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԻ ԶՈԿԱՏ (ԳՈՒՄԱՐՏԱԿ)

Հարձակողական յերթի ժամանակ գունդը դիտի  
ջոկատ է ուղարկում մեկ գումարտակ: Զոկատի խոն-

դիրն և լինում տեղահան սնել հակառակորդի մանր  
գործածութիւնը (հետախուզությունն ու նրա պահապան  
մասերին), վորպեսզի դրանով իմացվի, թե վորտեղ  
են գտնվում հակառակորդի գլխավոր ուժերը և ինչպես  
են նրանք տեղավորվում կամ շարժվում :

Գլխի ջոկը պետք է դրավի մարտի համար հարմար  
բարձրունքները, անտառները կամ գյուղերը, վոր-  
պեսզի թեթեւացնի իր դնդի մարտը և նրան ժամանակ  
տա հարկավոր շարժումները կատարելու :

Բացի դրանից գլխի ջոկատի անելիքների մեջ է մտ-  
նում ճանապարհները, կամուրջները, ճեղանուղիները  
(гати), վորի համար նրան տրվում են գործիքներ (մեծ  
բահեր, կացիններ, սղոցներ), վորպեսզի նա կարողա-  
նա այդ բանը կատարել իր ուժերով :

Կովկասի քաղաքացիական պատերազմում, պահա-  
պան գործատու ուղարկած ժամանակ այդ գործատուի  
պետին՝ Ասսա դետի անցարանը կանոնավորելու մասին  
ցուցմունք չէր տրված : Յեւ ջոկատն շտապ կերպով  
պետք է դնար այդ սուլններից (լեռնային գյուղերը)  
մեկը : Յեւ վորովհետեւ գլխի ջոկատը գործիքներ չու-  
ներ, մինչև անցարանը պատրաստելը, գունդը նույն-  
պես մոտեցավ : Գլխի ջոկատի պետը առաջուց չհայտնեց  
այդ ձգձգման մասին, իսկ անցարանը պատրաստվեց  
մոտ 3 ժամում : Գունդն ուշացավ և չկարողացավ իր  
խնդիրը կատարել : Նույնիսկ կարող էր ալելի վատ  
լինել, վորովհետեւ գունդն Ասսա դետի մոտ առջևից  
առանց պահպանության եր, կարելի չիւր նրան դնդա-  
կոծել մյուս ափից :

Գլխի ջոկատը պետք է շարժվի դնդից մինչև 3 կի-  
լոմետր հեռավորության վրա ապահովելու համար  
դնդին հրետանային գործոն կրակի դնդակոծությու-



նից (գործոն կրակը կամ հրետանու, կամ գնդացրի և կամ հրացանի կրակն և, վորը մեծ հարված և հաս-  
ցնում) :

Սակայն գլխի ջոկատն ինքը չի կարող գործադու-  
նով շարժվել, առանց իր սեփական պահպանությունն  
ուղարկելու :

Անմիջական պահպանությունը գլխի ջոկատին  
սլաշտպանում և հաստոցավոր գնդացիրները կրակից :  
Ուստի գլխի ջոկատի պահպան գործամասերը պետք և  
ջոկատից շարժվեն մինչև 2 կիլոմետր դեպի առաջ և  
թեև (Տես սխեմա 2) :



Սովորաբար դեպի առաջ գլխի  
ուղեկալ և ուղարկվում հրաձգա-  
չին դասակը տալով նրան հաս-  
տոցավոր գնդացիրներ և յերբեմն  
ևլ գումարտակային հրանոթ :  
Պահպանության համար կողք-  
րից գլխի ջոկատն ուղարկում և  
հեծյալ կամ հետևակային դետ-  
քեր՝ մեկ ջոկի ուժի չափով :

Գլխի ջոկատի պահպանու-  
թյունն ուղարկվում և առաջուց,  
վորպեսզի շարժվում կանգ առ-  
նել շարվի : Որինակ, վորովհետև  
գլխի ուղեկալը պետք և ջոկա-  
տից 2 կիլոմետր առաջ լինի,  
ուրեմն, նա կես ժամով առաջ և  
դուրս գալիս գլխի ջոկատից :

Գլխի ջոկատը նույն կարգով  
և շարժվում, ինչ վոր բոլոր հե-  
տևակային գործադուները : Նա  
պետք և շարունակ մարտի հա-  
մար պատրաստ լինի : Ուստի յե-  
թե այդ ջոկատին հեծյալ  
գործադու և տրված, այդ դեպ-

Սխեմա. 2 գլխի ջոկատ



քում նրանից հետախուզութեան համար ուղարկ-  
վում են հեծելազետքեր: Մնացած հեծելակները շարժ-  
վում են ջոկատի գործառն առջևից, վորպէսզի կա-  
րելի լինի ամենի հարմար և ամենի արագ կերպով կապ-  
վել պահպանութեան հետ կամ դուրս գալ լրացուցիչ  
հետախուզութեան:

Յեթն ջոկատին տրված և հրետանի, այդ դեպքում  
այդ հրետանին շարժվում և գործառն գլխին մոտիկ,  
որինակ, այսպիսի կարգով՝ 1-ին վաշտը, զնդի բաժն-  
յակի մարտկոցը, զնդացրային վաշտը, 2-րդ վաշտը,  
3-րդ վաշտը:

Ինչո՞ւ զնդացրային վաշտը նույնպէս պետք և տա-  
նել գործառն գլխին մոտիկ. հրետանին բոլորից հե-  
ռու յն կրակում և նա առաջինը կարող և ողնել հետե-  
վակին սուսը շարժվել դեպի հակառակորդն: այնպիսի  
հեռավորութեան վրա, վորտեղից կարելի չեն նրա վրա  
գնդացիրներով և հրացաններով կրակել: Յեզ վորով-  
հետեւ զնդացիրներն ամենի հեռուն են խփում, քան  
հրացանները, հրետանուց հետո մարտիկները շար-  
ժումը պաշտպանում են զնդացիրները: Դրա համար  
եւ զնդացրային վաշտը պետք և լինի առջևից:

Յեթն ջոկատին տրված են զրահապատ ավտոմոբիլ-  
ներ, նրանք շարժվում են առանձին ճանապարհներով  
սակայն պահպանութեան պաշտպանութեամբ: Ինչո՞ւ  
յն այդ հարկավոր: Զրահապատը զնում և ամենի արագ,  
քան հետեւակը և նրան առաջ շարժելու և գլխի ուղե-  
կալը պաշտպանելու համար հարկավոր և լայն տարա-  
ժութեան: Յեթն գլխի ջոկատի շարժման շերտում,  
առանձին ճանապարհ չկա, այդ դեպքում զրահապատ-  
ները կարող են շարժվել նույն ճանապարհով տեղից  
տեղ թռչելով:

Այդ նշանակում եւ, վոր գրահապատները առաջ են  
շարժվում մինչեւ վորեւե անտառ, գյուղի ծայրամաս  
կամ գլխի ջոկատի առջևի բարձունքը եւ կանգ են առ-  
նում : Այնուհետեւ յերբ ջոկատը հասնում եւ նրանց, նը-  
րանք նորից շարժվում են մինչեւ հաջորդ տեղական ա-  
ռարկան : Այդպիսով նրանք չեն խանդարում հետեւակին  
շարժվել, իսկ հետեւակն եւ նրանց չի խանդարում : Բացի  
դրանից այդպիսի տեղից տեղ թռչելը հնարավորություն  
եւ գրահապատներին մշտապես պաշտպանել եւ գլխի ջո-  
կատի պահապան գործառններին եւ իրեն ջոկատին :

Շարժման ընթացքում գլխի ջոկատի բոլոր մասե-  
րը, նրա պահպանությունը եւ առանձին մարդիկ պետք  
եւ աշխատեն աննկատելի լինել հակառակորդի թե դետ-  
նից եւ թե այն ինքնաթիռների վրայից, վորոնք հետա-  
խուզություն են կատարում :

Դրա համար, այնտեղից, վորտեղից կարելի չե պետք  
եւ անցնել առանց ճանապարհների, թաքնվելով ճանա-  
պարհի մոտերքի մացառուտներում, ճանապարհի կող-  
քերին, առուների մեջ, սակայն այնպես, վոր շարժումը  
չդանդաղի : Ինքնաթիռներ յերեւալիս դադարեցնել շար-  
ժումը եւ պառկել : Սայլերն ու ձիւրին բաց տեղերում  
լայլ եւ շարժել ճանապարհով, քանի վոր նրանց ծածկել  
չի կարելի, սակայն վոչ թե շարժով, այլ անկանոն ձե-  
վով, վորպեսզի վերեւից մտածեն, վոր դրանք խաղաղ  
քնակչության սայլեր են :

Յերբ հակառակորդի ինքնաթիռն անհետանում եւ,  
սայլերը կանգ են ստնում եւ սպասում են հետեւակի մո-  
տենալուն :

Պետք ե ինքնաթիռի յերեւալու ժամանակ միշտ շտա-  
պել դեպի ստվերը, սակայն խուսափել առուներից, յեթե  
նրանք չեն կարող ծածկել իրենց ստվերով : Միայնակ

մարտիկներ կարող են շարժվել ամեն տեղով, վորտեղ վարեն առարկա կա—ցանկապատեր, շենքեր, ծառեր, մացաններ, ձորեր, ձորակներ, բլուրներ, վորոնց ստվերը ծածկում է շարժումը:

Յեթն տեղանքն ամբողջ ճանապարհին բաց է, լավ է շարժվել վաղ առ վաղ պահպանելով վաշտերի մեջ  $\frac{1}{2}$  կիլոմետր հեռավորութուն:

Պետք է քողարկվել ամեն բանից՝ և՛ հակառակորդից, վորը կարող է ուղարկել հեծյալ, հետևակ և ուղաչին հետախուզութուն, և՛ բնակիչներից, վորովհետև նրանցից շատերը կարող են հակառակորդին տեղեկութւններ հաղորդել մեր մասին:

Բացի քողարկումից, պետք է ինքնաթիռների դեմ իբրև միջոց ծառայեցնել զնդացիները, վորոնք ոժտոված են հոտուկ նշանոցներով և հաստոցներով: Նույնպես նշանակվում են յերկինքը դիտողներ, վորոնք շարժվում են զորասյուների կողքերից և ազդանշան (սուլիչ, փող) են տալիս, հենց վոր ինքնաթիռը նկատում են: Նրանք պետք է ունենան յերկդիտակներ: Ինքնաթիռները յերևան բերելու ազդանշանը պետք է ամեն մեկն էլ հասկանա և հրամատարների հրամանով ճանապարհից դուրս փախչի:

Հակադադերը պետք է լինեն պատրաստի դրութւն մեջ, վորովհետև ինքնաթիռները կարող են քիմիական ումքեր նետել կամ թե չե կարող է զորասյունը հանդիպել վարակված տեղանքի (տեղանքի վրա քիմիական բաղադրութւն են լցնում, վորը գոլորշիանալով թունաւորում է մարդկանց և կենդանիներին):

Գլխի ուղեկալի հետ միասին դեպի առաջ ուղարկվում է քիմիական հետախուզութւն, վորպեսզի վերջինս կարողանա վորսչել, թե վորտեղ վարակված տե-

դեր կան: Ամենից հաճախ վարակում են նեղ տեղերը՝ ձորակները, ճեղանուղիները, կամուրջները և այլն:

Եթե պատահում են այդպիսի վարակված նեղ տեղեր, պետք է դառնել նրա կողքից անցնելու ճանապարհ և ցույց տալ ջոկատին: Հենց այդ ել անում են հետախույզները: Նրանք իրենք մաքրում են այդ ճանապարհը և նշաններով ցույց են տալիս, վոր տեղը թունավորված է:

Վորպեսզի շարժվելիս մեր ինքնաթիռները գիտենան, թե վորտեղ ենք մենք գտնվում, ջոկատը պետք է նրանց հետ կապ պահպանի: Դրա համար յուրաքանչյուր կարմիր բանակային ամենից առաջ պետք է գիտենա մեր և թշնամու ինքնաթիռների առանձնահատուկ նշանները: Մեր անրոպլաններն իրենց թևերի վրա ունեն կարմիր աստղանշաններ: Պատերազմի ժամանակ այդ նշանները կփոխվեն, սակայն ամեն մեկը պետք է այդ նշանները գիտենա: Սակայն ինչպե՞ս ցույց տանք մեր ինքնաթիռին, վոր մե՛նք ենք: Նրա համար շատ դժվար է վերևից վորոշել, ով է յերկրի վրա՝ յուրայինները, թե՞ հակառակորդը: Իսկ ցած իջնել նա չի կարող, վորովհետև կիջնի և հանկարծ կնկնի հակառակորդի վրա:

Ուստի իր ինքնաթիռներին հետ կապ պահպանելու համար, կան այնպիսի քաթաններ, վորոնք փռվում են դետոնին: Ողաչում գիտե, թե վորք քաթանն է նշանակված մեր զորքը ցույց տալու համար, և դրանով պետք է ճանաչի, վոր այդ զորքը իրենցն է, վորտեղ ենք մենք հասել և նրա համար հեշտ կլինի դառնել հակառակորդին:

1927 թ. գորաշարժերին դիվի ջոկատը (վաչաղ զննադիրներով հանդերձ) շարժվում եր առանց վորևե



քույրերիման միջոցների: Հանապարհն սկզբում անց-  
նում էր մացառներով, իսկ այնուհետև բացվում էր  
մաքուր, դաշտը: Զոկատը հենց նոր էր դուրս յեկել մա-  
ցառուտներից յերբ հակառակորդի յերեք սավառնակ-  
ները կողքից յերևացին: Յերկինքը դիտողներ չկային,  
սակայն ատոնց նրանց ել կարելի յեր ջոկատի մի մասը  
թաղցնել: Սակայն վոչ վոք մատը մատին չխփեց:

Ինքնաթիռները նկատելով դորասյունը, վրա տը-  
վին, և վորովհետև ջոկատում վերև խփող դնդաքեր-  
ները հարմարեցված չէին, նրան գրոհեցին:

Կարմիր բանակայինների կիսից ավելին շարքից  
դուրս դեցեցին:

Նույն գորաշարժերում, կարմիրների նահանջելու  
մամանակ, կարմիր ինքնաթիռներն ել գրոհեցին իրենց  
դորասյանը, քանի վոր ճանաչման քաթաններ չեյին  
իոված, և մարտիկների մեկ հինդերորդ մասին շարքից  
դուրս դեցեցին:

Այս որինակները ցույց են տալիս, թե վորքան կա-  
րևոր և քողարկումը, դիտողությունը, պահպանու-  
թյունը և կապը:

Գլխի ջոկատը, յերբ անցնում և մեծ դյուղից կամ  
անտառից, իր թևերը պահպանելու համար ուղարկում  
և նույնպես լրացուցիչ—անշարժ պահպանություն:

Պահպանության մեջ նշանակում են հրաձգային  
կամ թեթև դնդաքային ջոկեր: Նրանք գրավում են  
դյուղերի ծայրերը կամ անտառների յեզրերը, ճանա-  
պարհների խաչմերուկները, անտառի ուղատները և ա-  
ռաջուց այնտեղ են ուղարկում, վորպեսզի ջոկատը մո-  
տենալիս տեղում լինել: Մնում են իրենց տեղերում կամ  
մինչև գլխավոր ուժերի (դնդի) դորասյունից փոխորդ  
մտանալը, կամ թե մինչև այդ դորասյանի պոչն անցնելը,

նայած խնդրին: Այդ ջոկերը հասնում են իրենց վաշտերին մեծ դադարին կամ դիշերոթին:

Մեծ կտմ փոքր դադարների համար կանդ առնելիս գլխի ջոկատը տեղավորվում և այնպիսի տեղի մոտիկ, վրը հանդիսանա մարտի համար իբրև հարմար դիրք: Այդ հարկավոր են նրա համար, վորպեսզի յերբ հակառակորդը հարձակվի, կարելի չինի նրան կանդ առնել տալ և հնարավորութուն տալ գնդին ծավալվել: Այդպիսի դադարներում առանձնապես պետք և լավ քողարկվել, յերկնքի դիտողութուն կատարել և ինքնաթիռների համար դնդաղներնրը պահել պատրաստի դրության մեջ:

Յերբ դետքերը լուր են տալիս հակառակորդի հետ հանդիպելու մասին և ուղեկալը սկսում և նրանց հետ կռվել, ջոկատը համարձակ կերպով հարձակում և կատարում հակառակորդի վրա, կատարելով դրված խնդիրը:

Յեմ վորովհետև առջևում առաջինը ընդհարվել են դետքերն ու ուղեկալները, ուստի գլխի ջոկատի պետին արդեն վորոշ բան հայանի յե հակառակորդի մասին և նա խնդիրներ և տալիս վաշտերին, զրահապատներին և մարտկոցին:

Հակընդդեմ մարտի ժամանակ, յերբ հակառակորդը նույնպես հարձակվում և յուրաքանչյուր կ. բանակային պետք և լինի խիստ վճռական և համարձակ, վորովհետև միմիայն նա կարող և հաղթել, ով առաջինը չի լինում տեղում սպասողը, այլ առաջ և շարժվում և տրիպում և իր հակառակորդին կանդ առնել: Հակընդդեմ մարտում պետք և ձգտել առաջ, վորպեսզի հնարավորութուն չորվի հակառակորդին ուղքի դալու:

Յերբեմն գլխի ջոկատը խնդիր և ստանում առաջուց շարժվել գեղի կամուրջը, ճեղանուղին կամ լեռների կիրճը, փորպեպի կարելի լինի պահել նրանց մեր ձեռքում և թույլ չտալ հակառակորդին նրանց դրավելու։ Այդ ժամանակ ջոկատը սլաշադանության համար տեղափոխվում և կամուրջի կամ ճեղանուղու առջև 3-4 կիլոմետր հեռավորության վրա, վորպեսզի հնարավորություն տրվի գլխավոր ուժերի զորասյանն անցնել առանց դնդաքրային կրակի տակ ընկնելու։ Հենց վոր զորասյանն այդ տեղից անցնում և, գլխի ջոկատը, յեթե հակառակորդի դեմ կռիվ էի մղում, շարժվում և առաջ։


Յեթե այնպես և լինում, վոր հակառակորդի դեմ պետք և կռիվ մղել գլխի ջոկատը գնդի գլխավոր ուժերն անցկալել այդ հետո իր խնդիրը համարում և կատարած։ Նա ստանում և իր մարտական տեղամասը և շարժանկում և կռիվ մղել արդեն վոչ թե իրեն գլխի ջոկատ, այլ փորպեպ այսինչ գնդի գումարտակ։

### ԿՈՂՔԻ ԶՈՎԱՏԸ (ԳՈՒՄԱՐՏԱԿԸ) ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Հարձակողական յերթի ժամանակ գումարտակը կողքի ջոկատի մեջ և ուղարկվում միմիայն դիվիզիայի, կորպուսի զորական միավորումներին։ Կողքի ջոկատի խնդիրն և գլխավոր ուժերի զորասյանը կողքի հարձակումներից պահպանելը։ Այդ հարկավոր և նրա համար, փորպեպի պահպանվող զորքերը կաշողանան հանդիստ կերպով կատարել իրենց խնդիրները։ Կողքի ջոկատը շարժվում և կողքի ճանապարհով գլխավոր ուժերի զորասյանի 3-3 1/2 կիլոմետր հեռավորությամբ և այդ զորասյան դ.ի.ի բարձրության վրա։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԿԸ  
ԳՐԱԴԱՐԱՆ № 2  
ԱԿԱԴՄԻՍՏՐԱԿ

Կողքի ջուկատն եւ այնպէս, ինչպէս գլխի ջուկատը, շարժման ուղղութեամբ գլխի ուղեկալ եւ ուղարկում դեպի առաջ մոտավորապէս մեկ հարաձգային դասակ հաստոցավոր զննացիրներէ մեկ դասակով: Բայ թէն ուղարկում են կողքի հեծյալ դետք կամ հեծյալ ուղեկալ: (Տես սխեմա 3):



Սխեմա 3. Կողքի ջուկատը  
հարձակման մամանակ

Թյուներ ուղեկալից մինչեւ ջուկատը նույնն է, ինչ վոր գլխի ջուկատում:

Թիկունքն ուղարկվում է մեկ ջուկ՝ կարգը դիտելու և վտանգից նախազգուշացնելու համար: Այդ պահապան ջուկը շարժվում է ջուկատի հետեւից 300-400 մետրի վրա:

Ջուկատի կողքի պահպանութեան ուժը կախված է լինելու նրանից, թե կարելի՞ չի սպասել հակառակորդին, թե վաղ և կախված է լինելու տեղանքից: Բայ տեղանքում բավական և ունենալ դետք, վորը հակառակորդին հեռվից տեսնի և կողքի ջուկատի պետին նախազգուշացնի: Կտրուված տեղամասը, վորը պատած է ձորերով, ձորակներով, մացառներով, բարձր տարեկանով և պուրակով, ուղարկվում է ուղեկալ: Հեռավորու-



Հակառակորդի հետ բաղխվելիս կողքի ջոկատը նը-  
րան սկսեց և նեղի և պարդի, թե ինչպիսի ուժեր են  
գործում թեև վրա և ինչպիսի են նրանք տեղավորված  
կամ ինչպիսի են շարժվում :

Կարևորն այն է, վոր կողքի ջոկատը վոչ միայն  
թույլ չտա հակառակորդին հարձակվելու գլխավոր ու-  
ժերի գործայան վրա, այլ վոր շարունակի նրան վոր-  
քան կարելի յն ավելի նեղել և հակառակորդի վերա-  
բերյալ բոլոր տեղեկությունները տեղ հասցնել: Դրա  
համար նա սկսեց և գործի վճռական կերպով չթողնե-  
լով, վոր թշնամու խելքը գլուխը գա:

Յերբ գլխավոր ուժերը ծավալվում են և յուրա-  
քանչյուր գործառն ստանում և իր խնդիրը, կողքի ջո-  
կը գնում և իր գործողությունների շերտում հարձա-  
կում կատարող գնդի հրամանատարի տրամադրության  
տակ:

Կարմիր բանակայիններին միմյանց խառնելուց խու-  
սալեկու համար, կողքի ջոկատը նշանակվում և այն  
գնդից, վորին մտածում են հակառակորդին հանդիպե-  
լիս ուղարկել կողքի ջոկատի շարժման կողմը:

Հենց վոր կողքի ջոկատը գնում և գնդի հրամա-  
նատարի տրամադրության տակ, նա արդեն այլևս վոչ  
թե կողքի ջոկատ և, այլ գնդի ստորաբաժանում, վորն  
ստացել և իր մարտական խնդիրը:

## ԿՈՂՔԻ ԶՈՎԱՏԸ (ԴՈՒՄԱՐՏԱԿԸ) ԹԵՎԱՑԻՆ ՑԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Թեև այն յերթի ժամանակ կողքի ջոկատի մեջ դու-  
մաբատին ուղարկվում և գնդից (ավանդաբդից): Նա  
շարժվում և այն կողմը, վորտեղից սպասվում և հա-



վորոշ ժամ և ատաջ անցնելով, հենց վոր դունդը անց-  
նի վտանգավոր տեղից: Այդպիսի շարժումը կանգառ-  
ումներով կատարվում է այն տեղերում, վորտեղ հա-  
կառակորդը կարող է հարձակվել միմիայն վորոշ կե-  
տերում: որինակ, ճահճոտ տեղանքում գրավվում են  
ճեղանուղիները և ճանապարհների խաչմերուկները,  
դյուղերը, խիտ անտառներում—ուղատները: լեռնե-  
րում—կիրճերն ու լեռնանցքները: Նույնն է արվում  
նաև կողքային վատ ճանապարհներ լինելու դեպքում,  
վորպեսզի շարժումը չդանդաղի:

Յեթե թևերի վրա կատարվող հարձակողական  
մարտի ժամանակ կողքի ջոկատն ուղարկում է հեծյալ  
թույլ ուղեկալներ կամ թե նույնիսկ դեսքեր, թևա-  
յին շարժման ժամանակ պետք է հակառակորդի կողմն  
ուղարկել ավելի կայուն և ուժեղ զորամասեր:

Ուստի դեպի ատաջ և թիկունքն ուղարկվում են  
հրաձգային մեկ դասակի ուժ ունեցող յերթային ուղե-  
կալներ կամ թե՛ սրահապան ջոկեր: Այդ բանը կախված  
է լինելու և՛ տեղանքից, և՛ խնդրից և՛ հակառակորդի  
հետախույզությանից: Հակառակորդի կողմը, յեթե կա  
կողքի ճանապարհ, կանոնավոր կերպով դեպի թևն է  
ուղարկվում մեկ հրաձգային դասակից բազկացած կող-  
քի յերթային ուղեկալ, ուժեղացված հաստացավոր  
դնդաջիկներին մեկ դասակով:

Այդ ուղեկալը կողքի ջոկատի հետ միասին շարժ-  
վում է իր ջոկերով յերբեմն գրավում է ճանապարհնե-  
րի կարևոր խաչմերուկները, կամուրջները, դյուղերը:  
կողքի ջոկատի անցնելուց հետո այդ ջոկերը հանվում  
է միանում են ուղեկալի հետ:

Ճանապարհներ չլինելու դեպքում, վորոնցով կա-  
րելի չէ կողքի յերթային ուղեկալ ուղարկել, կարիք

լինում կողքի ջոկատի շարժվելու ժամանակ կարևոր  
կետերը դրավելու համար ուղարկել ղեպի առաջ ա-  
ռանձին պահապան ուղեկալներ։ Այդ պահապան ուղե-  
կալները կարող են ունենալ մեկ ջոկեց մինչև մեկ դա-  
սակի ուժ։ Յեթե այն կետից, վորտեղ պետք է ուղար-  
կել ուղեկալ, լավ տեսաշրջան և բացվում, և հետոն  
յերևում է և չկան այնպիսի տեղեր, վորտեղից հա-  
կառակորդը կարողանա անցնել ծածուկ կերպով, ու-  
ղեկալի մեջ է դրվում մեկ ջոկ։ Յեթե կետը կարևոր  
է, դժվար և հետևել հակառակորդին և նա կարող է հար-  
ձակվել կողքի ջոկատի վրա, այդ դեպքում ու-  
ղարկվում է ուժեղ ուղեկալ—դասակ։

Այդ առանձին պահապան ուղեկալները վորոշված  
ժամին դրավում են իրենց ցույց տրված կետը, խրա-  
մատավորվում են և կատարում են անշարժ պահապա-  
նության ծառայություն (տես անշարժ պահպանու-  
թյան մասին)։

Յերբ նրանց կհրամայվի, նրանք կմիանան իրենց  
գործառային, հասնելով նրան դադարի կամ գիշերոթի  
ժամանակ։

Առանձին պահապան ուղեկալներով պահպանվելիս  
առանձնապես կարևոր է, վոր բոլոր գործառայի-  
րուքս դան ժամանակին, դրավեն ցույց տված տեղերը  
և մինչև «հանվել» հրամանը դառնին իրենց տեղե-  
րում։

Հարձակման դեպքում ուղեկալները պինդ մնում են  
իրենց դիրքերում այնքան ժամանակ, վորքան հար-  
կավոր է, վոր դռնդը կատարի իր խնդիրը։

Կողքի ջոկատը կանգառումների ժամանակ տեղա-  
վորվում է այնպես, վոր կարելի լինի հակառակորդի  
յերևալու դեպքում արագ դրավել իր դիրքերը։



Յիգային և քիմիական պահպանութեան, քողարկ-  
ման և կապի բոլոր միջոցները կողքի ջահառները հար-  
ձակադական և թեւային յերթերի ժամանակ պետք և  
կատարեն այնպէս, ինչպէս ցույց և արված գլխի ջո-  
կատի համար:

## ԳՈՒՄԱՐՏԱԿԸ ԹԻԿՈՒՆՔԻ ԶՈԿԱՏՈՒՄ ՆԱՀԱՆՁՈՂԱԿԱՆ ՅԵՐԹԻ ԺԱՄԱՆԱԿ

Թիկունքի ջոկատը, յերբ մեր զորքերը նահանջում  
են, պետք և հակառակորդին կանգ առնել տան, վո-  
պեպի դունդը կարողանա արագ կերպով յետ քաշվել և  
դուրս դալ հակառակորդի հրետանային գործուն կրա-  
կով հարվածվող չընենց:

Դրանից հետո թիկունքի ջոկը կանգ և առնել տա-  
լիս հակառակորդին, յիթե նա հալճակիում և, վո-  
պեպի դունդը կարողանա անընդհատ և անխտանել կեր-  
պով նահանջը շարունակել:

Վերջապէս թիկունքի ջոկատի յերբորդ խնդիրը  
պետք և լինի՝ պանդապեցնել հակառակորդի շարժումը:  
Այդ կատարվում և նահանջի ճանապարհները, անցա-  
րանները ավիթիսով, կերճերը, ուղղութիւնները փակելով և  
հետադարձելն ու հետախոսները վռնջացնելով:

Այդ բոլորը կանգ առնել կտա հակառակորդին  
այնքան, վար վերջ ի վերջո թիկունքի ջոկատը կկար-  
դանա հակառակորդից պոկվել: Որինակ, թիկունքի  
ջոկատն ամբողջ ժամանակ կոխի և մղել և նահանջել  
և. բայց ահա դեռ յի հանդիպել: Նա անցնում և կա-  
մուրջի մյուս կողմը, ավելում և նրան և շարունակում  
և յետ քաշվել, իսկ հակառակորդը դեռևս մյուս ավիթի  
և և պետք և նորից նոր կամուրջ կառուցի, իսկ հետո  
արդեն հասնի մեր թիկունքի ջոկին: Դրա համար հար-

կալուր և յերկու-յերեք ժամ : Իսկ այդ ընթացքում թի-  
կունքի ջուկը և դունդը կպնան հետու : (Տես սխեմա 5) :

Թիկունքի ջուկատը վորքա՞ն պետք և գնդից հե-  
ռացվի : Սկզբում թիկունքի ջուկատը կլինի մոտիկ-1-2  
կիլոմետրի վրա , իսկ աճուհետև յեթե նա կանդ և առ-  
նել տալիս հակառակորդին , այդ տարածությունը մեծ-



Սխեմա 5. Թիկունքի ջուկատը  
նահանջի ժամանակ

րուստանների վրա և պետք և նույնիսկ հակադրոհները  
դիմի , վորպեսզի հակառակորդին չեռ չպրտի :

Յուրաքանչյուր մարտիկ պետք և գիտենա , վոր

անալու չե : Յեւ հակառա-  
կորդին դադարւ համար ա-  
մեն մի կանդ առնելու  
դեպքում ջուկատն այնքան  
աւելի լետ կնկնի գնդից :  
Այդ տարածությունը կարող  
և հասնել 5—6 կիլոմետրի ,  
իսկ աճուհետև թիկունքի  
ջուկը համար շատ վտանգա-  
վոր կլինի կարվել և նա  
պետք և լետ քաշվի դնդի  
լետակից : Յեթև գունդը  
դեռևս 3 - 4 կիլոմետր չհե-  
ռացած՝ հակառակորդը շա-  
րունակ նեղում և և ցան-  
կանում և դուրս դնել թի-  
կունքի ջուկատին , այդ դեպ-  
քում յուրաքանչյուր մար-  
տիկի պարտականություն-  
նրն և վճռական կերպով  
դադել հակառակորդին և  
թուլլ չտալ առաջ շարժել :  
Ջուկատը պաշտպանողական  
չերտը գրավելով չպետք և  
ուշադրություն դարձնի կո-

Հակառակորդի առաջն առնելով և նույնիսկ իր կյանքը դնելով, գտառիկ և վաշտի իր ընկերներին մահից փրկում և :

Յերբ հակառակորդը յետ և քաշվում 3-4 կիլոմետր, այսինքն, յերբ հակառակորդի հրետանային գործոն կրակի տակից դուրս և դալիս, թիկունքի ջուկառը սկսում և հեռանալ մյուս բնադիծը՝ առաջինից 700-1000 մետր հեռավորութեան վրա :

Այդպիսի տարածութեանը հարկավոր և նրա համար, վորպեսզի չուտ յետ քաշված դորամտները կարողանան յերկրորդ բնադծից պաշտպանել հետ քաշվող դորամտներին :

Թիկունքի ջուկառի յետ քաշվելու ժամանակ սկզբից նահանջում և դումարտակի թիկունքը—բժշկական ողնաթխան կետը, դումարտակային փամփշտի կետը, վաշտային փամփշտի յերկանիվները :

• Այնուհետև յետ են քաշվում այն վաշտերը, վորոնք դտնվելիս են յեղել առջևում և կոխվ են մղել հակառակորդի դեմ առաջին շարանում (կշնյոնում) : Յետեվի վաշտերը պետք և պաշտպանեն նրանց յետ քաշվելը :

Յերբ առաջին վաշտերը հեռանում են և նոր դիրք բռնելով կրակ են բանում, սկսում և նահանջել յետեի վաշտը (2-րդ շարանի), և արդեն վերջին հերթին յերկրորդ բնադծին և նահանջում դնդացրային վաշտը : Յերկրորդ դիրքն անցնելու ժամանակ յուրաքանչյուր կարմիր բանակային պետք և աշխատի չփակել իրենց նահանջը պաշտպանող՝ դնդացիրների կրակը : Պետք և բնտրել ծածկվելու տեղեր՝ առուներ, փոսեր, ճորակներ :

Յեթև հակառակորդը դեռ չտրուճակում և նեղել,

նույն կարգով եւ անցնում են յերրորդ բնադիծը, աշխատելով ավերել այն ամենը, ինչ վոր կարող ե թշնամու տալն առնել: Հակառակորդի թույլ ճնշման դեպքում ավելի արագ կերպով են յետ քաշվում՝ միմիայն գնդացիւնների պաշտպանությամբ:

Իսկ յերբ հակառակորդը յերկար ե կանգ առնում, որինակ, դեռի սրածառով, ինչպես ցույց ե տրված վերևում, դումարտակը կարող ե հակառակորդից հեռանալ 2½-3 կիլոմետր: Այդ ժամանակ նա թողնում ե թիկունքի յերթային ուղեկալին (ձեռքի դնդացիւններով ուժեղացված դասակ) ե կողքի դեաքերին (ավելի լավ ե հեծյալ դեաքեր, վորովհետե նրանք կարող են շարժվել առանց ճանապարհների), ծածուկ տեղերով հավաքվում ե ճանապարհի վրա ե շարունակում ե յերթային դորատյունով նահանջ կատարել: Հետախուզությանն այդ ժամանակ հետևում ե հակառակորդին:

Հինց վոր թիկունքի ջոկատը 700-900 մետր հեռանում ե, թիկունքի յերթային ուղեկալը թողնելով դիրքերում ձեռքի դնդացիւնները, նույնպես սկսում ե շարժվել թիկունքի ջոկատի յետևից: Ձեռքի դնդացիւններն ու կողքի դիրքերն սկսում են շարժվել թիկունքի յերթային ուղեկալի յետևից, յորք ուղեկալը նրանցից հեռանում ե 300-400 մետր:

Այստեղ սկսվում ե յետ քաշվելու նորմալ կարգը՝ ձեռքի դնդացիւններից բաղկացած թիկունքի դեաքը ե կողքի հեծյալ դեաքերը 300-400 մետր հեռավորության վրա թիկունքի ուղեկալի յետևից, թիկունքի ուղեկալը 700-900 մետրի վրա՝ թիկունքի ջոկատի յետևից ե թիկունքի ջոկատը 2-3 մետրի վրա՝ դնդի յետևից (Տես սխեմա 5):



Յեթն հալածակորդը հասնում է թիկունքի դեմ-  
քին (ներկայումս այդ հնարավոր է, վերսկզբին դո-  
քերը կարող են նստեցնել ավտոմոբիլների մեջ), թի-  
կունքի ուղեկալը մարտի յե մտնում է հալածակորդի  
առաջն առնում է, իսկ յերբ նա ևս չի կարողանում  
ապահովել յետ քաշվելը, այդ դեպքում թիկունքի ջո-  
կատն է ծավալվում, և ամբողջ պատմությունը նո-  
րից սկսվում է: Այդ դեպքում թիկունքի ջոկատը կը-  
վով յետ է նահանջում մեկ բնագծից մյուսն այն կար-  
գով, վորքի մասին մենք արդեն խոսել ենք:

Յետ քաշվելիս ամեն մեկը պետք է հիշի թե՛ զո-  
դարկման մասին, և՛ թե ինքնաթիռներից պաշտպանվե-  
լու մասին: Յետ քաշվելիս սալամանկներն առանձնա-  
պես հաճախակի դրոհում են հեռացող դորսայունե-  
րին: Թե՛ քիմիական, և թե՛ սղալին պահպանությունը  
և կտան իր ավիացիայով, հեռանալով, պետելով և  
հաջնաններով պետք է լավ և անդադար աշխատեն:  
Յետ քաշվելը ամենադժվար բանն է պատերազմում:  
Այդ վորքան կարգին է կատարվում, այնքան քիչ կո-  
րուստներ են լինում: Անկարգ լինելու, ցրվածության  
և շտապողականության դեպքում յետ քաշվելը լինում  
է անհաջող: Հալածակորդը թե՛ հեծելազորով, թե՛  
դրահապաաներով, թե՛ հետևակով և թե՛ ինքնաթիռ-  
ներով կարող է ջարդ ու փշուր անել մեծ և ուժեղ դո-  
րամասերին, յեթե նրանք գլուխները կորցնում են և  
նահանջը չեն կազմակերպում:

1919 թվին Զուբովկայի մոտ սպիտակները կռվում  
հաղթեցին: Զորամասերը յետ քաշվեցին դեպի Զու-  
բովկան և վորովհետև սպիտակների հեծելազորն Ախ-  
տուբա դեպի մոտ անցավ թիկունքը, միմիայն յետ քաշ-  
վել կարելի չիր դեպի Վոլգան տանող ճանապարհով: Բո-

լորը չփոխվեցին և նահանջը բոլորովին չկազմակերպվեց: Զորամասերը գործեցին ցաք ու ցրիվ: Շատերին կոտորեցին, շատերը գետում խեղդվեցին, մյուսները գերի ընկան: Միմիայն մի մասը կենդանի մնաց: (Տես սխեմա 6.):



Մի. 6. Մալա Զուրովկայի մաս

քաղվեց Յանդիկի, իսկ հետևակին հրամայված էր յետ քաղվել Որանժերեյնոյի: Տեղանքը ճահճային է, իսկ արևելքից ծովն է: Հակառակորդը հետևակը մեր 5 վաշտին դեմ էր արել ծովին, սակայն համառ կերպով թիկունքի ջոկատի միջոցով կանգ առնելով և դեպի թեր մի քանի դառակ ուղարկելով՝ գնդացիներն ուղղալով հերոսներն ուղոտոտի 17-ին դուրս յեկան իկրյանի մաս: Նրանք անցան 70 կիլոմետրից ավելի տարա-

Մյուս որինակն ասում է, թե ինչպես ամանադժվար դրուժյունից, լավ նահանջ կազմակերպելու դեպքում, կարելի չէ դուրս պրծնել առանց մեծ կորուստների: 1919 թ. կապից ծովի ավին 7-րդ հեծելազորային դիվիզիայի զորամասերը և 298-րդ գնդի 5 վաշտ դերքեր ելին դրավել Տերնովսկի կազան մոտերքը:

(Տես սխեմա 7):

Ուղոտոտի 8-ին հակառակորդը չերկու հեծելազորային գնդով մեր հեծելազորին հետևակից կտրեց և գնաց Յանդիկի: Մեր հեծելազորային դիվիզիան չեա-

ծություն, և որ յեղան մարտում, անընդհատ ընկնում  
էլին սպիտակների հեծելազորի թևից տեղի ունեցող  
զբոհների տակ, սակայն և այնպես դուրս յեկան նշա-



Մեծա 7. Նահանջ Հազանի մա-  
տի մարտից հետո

նակված շրջանը, կորցնե-  
լով շատ քիչ մարդ: Նրանք  
համարյա թե շրջապատված  
էին:

Ահա թե վորքան կարե-  
վոր են կազմակերպված,  
պլանաչափ նահանջը հերո-  
սությունը և սովորու-  
թյունը:

## ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յսանձին զործող գումարտակը յերթի ժամանակ  
պահպանվում և յերթային ուղեկալներով: Այդ ուղե-  
կալներն ել այնպիսի ծառայություն են կատարում,  
ինչպես գլխի ջակատից դուրս բերվող ուղեկալները:

## ՎԱՇՏԸ ԳԼԽԻ ԶՈԿԱՏ

Վաշտը կարող և նշանակվել գլխի, կողքի կամ  
թիկունքի ջակատի մեջ: Այդ պեպքերում նա դործում  
և այնպես, ինչպես վաղ մենք ցույց ենք տվել գումար-  
տակի համար, յերբ նա կատարում և միևնույն ծառա-  
յությունը:

Յերթի ժամանակ վաշտը բացի դրանից, կարող և  
նշանակվել նաև յերթային ուղեկալի մեջ: Մենք ասել  
ենք, վաղ յերբեմն գումարտակն ուժեղ յերթային ու-  
ղեկալներ և ուղարկում: Այդ ամենից հաճախ լինում

և հակընդդեմ մարտի ժամանակ—հարձակման և նահանջի ժամանակ, յի՞րք հակառակորդը խիստ նեղում և :

## ՎԱՇՏԸ—ԳԼԽԻ ՅԵՎ ԹԻԿՈՒՆՔԻ ՅԵՐԹԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԼ

Այդպիսի դեպքերում զնդացիներով ուժեղացված դասակի փոխարեն ուղեկայի մեջ և ուղարկվում վաշտը: Նրան զնդացրային վաշտից արվում են նույնպես հաստոցավոր զնդացիներ և նույնիսկ առանձին դուժարտակային հրանոթներ:

Շարժումն ոկայելիս հարձակման ժամանակ վաշտից ուղարկվում են մեկ կամ յերեւո ջոկ հաստոցավոր զնդացիներով. 1-2 կիլոմետր հեռավորության վրա վաշտը պահպանելու համար:

Վաշտի—յերթային ուղեկայի խնդիրն և հակընդդեմ մարտի ժամանակ մինչև դլխի շոկատի մոտենալը դրավել և պահել հարմար բարձունքները, անտառների ծայրերը և անցարանները:

Յեվ վորովհետև դլխի շոկատը շարժվում և ուղեկայի յետևից 2-3 կիլոմետր հեռավորության վրա, դրա համար ել վաշտը պետք և հակառակորդին կանգ առնել տա 1-2½ ժամ: Այդ ժամանակամիջոցում նրան կբավականացնեն թե փամփուշտները և թե մարգիկ, մանավանդ վոր նրան ոգնելու յե դլխի շոկատին արըված մարտկոցի կրակը:

Յերթային ուղեկային արված հաստոցավոր զնդացիների դասակը հակառակորդին հանդիպելիս անմիջապես առաջ է շարժվում, հարմար դիրք է դրավում և կրակ և լսաց անում: Նա պետք է հրեամանու հետ միասին սլաշտպանի գումարտակի շարժումն ու ծավալու-



մը: Այդ նույն ժամանակում գումարտակային հրա-  
նոթները ձգտում են հակառակորդի գնդացիները և  
նրա հետևակային թնդանոթները ջարդել:

Գլխի ջոկատի ծախսվելուց հետո վաշտն ստա-  
նում և իր անդամաւը և շարունակում և կռիւ մղել:

Թիկունքի ուղեկալում վաշտի գործողութուննե-  
րը վաճառվում են տարրերով թիկունքի ջոկատի գոր-  
ծողութուններից, և մյուս բոլոր դեպքերում նա գոր-  
ծում և աշխատում, ինչպես գումարտակը, սահմանվելով  
գիրքերով:

### ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ՎԱՇՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանձին յերթ կատարող վաշտը պահպանվում և  
մինչև մեկ ջոկի ուժ ունեցող դեպքերով: Դեպքերն  
ուղարկվում են առաջ և կողքերը 500-1000 մետր հե-  
ռավորութեան վրա: Հարձակման ժամանակ սովորա-  
բար իրեն գլխի դեպք և ուղարկվում ձեռքի գնդացի-  
ների մեկ ջոկ, իսկ թիկունքն ու թիկունքը՝ 3-ական դեպք:  
(Տես պատկ. 8):

Թեւային շարժման ժամանակ հակառակորդի կող-  
մը դեպի թիկ 1000-ից ավելի հեռավորութեան վրա ու-  
ղարկվում և ուժեղ դեպք. 1 թեւեւ-գնդացրային և 1  
հրաձգային ջոկ, յերեմին և նույնիսկ մի ամբողջ դա-  
տակ: Դեպի առաջ և ուղարկվում մեկ հրաձգային ջոկ,  
իսկ դեպի անվտանգ թիկն ու թիկունքը՝ 3-ական դեպ-  
քեր:

Նահանջի ժամանակ յետ քաշվելը պաշտպանելու  
համար ուղարկվում և մի ամբողջ դասակ, վորը շարժ-  
վում և վաշտից մինչ 1200 մետր հեռավորութեան վրա.  
Թեւերն են ուղարկվում 3 մարդուց մինչև 1 ջոկ, իսկ



շարժման ուղղությամբ՝ գլխի դետք, բաղկացած 3 մարդուց :

Վաշտի բոլոր մասերը յերթային պահպանության ժամանակ անշարժ ծառայություն են կատարում , ինչպես ցույց և տրված դասակի և ջոկի համար :

## ԳԼԽԻ ՅԵՐԹԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԼԸ (ԴԱՍԱԿԸ) ՀԱԿԸՆԴԻՆՄ ՄԱՐՏՈՒՄ

Գումարտակից կամ գլխի ջոկատից գլխի յերթային ուղեկալի մեջ նշանակված դասակն ուժեղացվում և հաստոցավոր գնդացիներով և յերբեմն ել գումարտակային հրանթներով :

Յերթային ուղեկալը պետք և շարժվի գլխի ջոկատից 2 կիլոմետրից վոչ ավելի հեռավորության վրա , վորպեսզի մարտի անցնելիս , անմիջապես պաշտպանվի գումարտակի գնդացրային վաշտի յետևից ընթացող գնդացիների կրակով :


Իր պահպանության համար յերթային ուղեկալը դեպի առաջ ուղարկում և դետք . գնդացրային ջոկը 500-600 մետր հեռավորության վրա . թևերի վրա 3-րդ և 4-րդ հրաձգային ջոկերից 3-ական դետքեր 300-400 մետրի վրա :

Հակառակորդին հանդիպելիս գլխի յերթային ուղեկալը պետք և յետ շարտի հակառակորդի մանր մասերը և հնարավորություն տա գումարտակին պատրաստվելու մարտի համար :

## ԿՈՂՔԻ ՅԵՐԹԱՅԻՆ ՈՒՂԵԿԱԼԸ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՅԵՎ ԹԵՎԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Կողքի պահպանության մեջ , հարձակման ժամա-

Նաև ուղեկալներին խնդիր և տրվում ապահովելու հա-  
կառակորդի հարձակումից և նրա առաջն առնելու,  
մինչև վոր գումարտակը կատարի իր մարտական խը-  
ղիրը:



Սխեմա 9. Կողքի ուղեկալը թևային շարժման ժամանակ

Յեվ վորովհետև ուղեկալը պետք և ապահովի ջո-  
կատը թևից, իսկ առջևում ապահովի և իրեն, ուստի  
պետք և ուղարկել 2 ջոկ: Ձեռքի ղնդացիներին մեկ ջոկ  
500-600 մետր դեպի առաջ, իսկ դեպի վտանգի յե-  
թակա թևը նույնքան հեռավորության վրա հրաձիգ  
ջոկերից մեկը:

Կողքի դետքը (հրաձգային ջոկ) պետք և շարժվի



ուղեկալի հետ համահամասար, վորպեսզի շարունակ պաշտպանի թիւը :

Թիւային շարժման դեպքում կողքի ուղեկալն իրեն մի փոքր այլ կերպ եւ ապահովում : Քանի վոր գլխավոր վտանգը թիւից եւ սպասվելու, և դրա հետ միասին ել կարելի յի հարձակում սպասել նաեւ թիկունքից, ուստի դեպքեր պետք եւ ուղարկել վոչ միայն դեպի թիւը և տուջ, այլ պետք եւ հետեւել նաեւ թիկունքին :

Ամենից լավն եւ հրաձգային ջոկը ուղարկել դեպի առաջ, իսկ վտանգի կողմը—ձեռքի զնդացիւրների ջոկը, ուժեղացրած 3-4 մարտիկներով դիտակալական ծառայութեան համար :

Թիկունքի դեպքի մեջ նշանակվում են 3-4 մարտիկ 350-400 մետր հեռավորութեան վրա : (Տես սխեմա 9) :

## ԹԻԿՈՒՆՔԻ ՈՒՂԵԿԱԼԸ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ՅԵՎ ՆԱՀԱՆՁՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Թիկունքի ուղեկալի մեջ նշանակված դասակը՝ հարձակման ժամանակ շարժվում եւ այնպիսի հեռավորութեան վրա, վորը նրան ցույց եւ տրվելու (մինչև 1 կիլոմետր) :

Նա պետք եւ դիտի ճանապարհի կողքերի և թիկունքի տեղանքը : Ուղեկալի խնդիրն եւ՝ դորասյան թիկունքում կարգ պաշտպանել և պահպան, հանդիսանալ անսպասելի հարձակումների դեմ :

Նա յետևն ու կողքերը 250-300 մետր հեռավորութեան վրա անմիջական պահպանութեան համար ուղարկում եւ 2-3-ական դիտակալներ :

Չորսյունից յետ ընկածները միանում են ուղեկալին : Հիվանդներն ու վիրավորները դրվում են վիրակապութեան ջոկատի սայլերի վրա :

Թիկունքից հարձակում տեղի ունենալու դեպքում ուղեկալը բռնում և հակառակորդին և յետևից շարժվող գումակում կարգ և սլաշտպանում :

Գումակում կարգ սլաշտպանելն առանձնապես կարևոր և , վորովհետև Թիկունքից տեղի ունեցող հարձակումը կարող և խուճասլ առաջացնել , իսկ խրտնած ձիերն ու գումակի կիսապատրաստ կարմիր բանակայինները կարող են ե՛լ ավելի փչացնել գործը : Ուստի հարձակման դեպքում , ուղեկալի մոտ յեղած սայլերը պետք և տարվեն մի կողմ :


Նահանջի ժամանակ Թիկունքի ուղեկալը ծանր և պատասխանատու ծառայություն և կատարում : Սովորաբար նա սլաշտպանում և վաշտի կամ Թիկունքի ջուկատի յետ քաշվելը :

Ուղեկալը հակառակորդին կանգ և առնել տալիս այնքան , մինչև վոր Թիկունքի ջոկատը յետ և քաշվում 600—700 մետր հեռավորության վրա , իսկ այնուհետև , ինչպես ցույց և տրված Թիկունքի ջոկատի համար , յետ և քաշվում ձեռքի ղեղացիներնրի սլաշտպանության տակ :

Ուղեկալին տրվում են բրորդներ ( սապյորներ ) , վորոնք պայթեցնում և հրդեհում են կամուրջները կոտրատում են ճեղանուղիները , փակում են ուղիները , քանդրում ամբարտակները : Իսկ յեթև բրորդներ չկան , առանձին հրամանով այդ ամենը կատարում են դասակի մարտիկները : Այդ շատ լավ միջոց և , վորպեսզի կանգ առնել տան հակառակորդին կամ Թիկուղ ժամանակավոր կենտրով նրա առաջն առնեն , իսկ իրենք ել արագ կերպով յետ քաշվեն :

Իր շարժումը չարունակելիս ուղեկալը պահպանվում և Թիկունքի դետքի ( 1—2 ջոկ՝ ձեռքի ղեղացիներով ) միջոցով , և շատ հաճախ կարիք և լինում յերկու

Հողմերն ուղարկել մինչև 1 հրաձգային ջոկի ուժ ունեցող կողքի դեաքեր: Դեաքերը հեռանում են մինչև 350-400 մետր: (Տես սխեմա 10):



Սխեմա 10. Թիկանքի ուղեկալը նահանջի ժամանակ

Բացի դրանից, դեաքերի հետ կապ պահպանելու համար անհրաժեշտ է լինում յերբեմն փակ տեղանքում տեղադրվել զույգ դիտակալներ, վորոնք շարժվում են դեաքերի կորիզի և ուղեկալի արանքով:

Յետ քաշվելու ժամանակ կապն առանձնապես կաթեմբ է, վորովհետև յետ մնացածներն ու մոլորվածները կարող են հեշտությամբ դերի ընկնել:

## ԱՌԱՆՁԻՆ ՇԱՐԺՎՈՂ ԴԱՍԱԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դառակն առանձին շարժվելիս, —վորը տեղի յե ու-


նենում մանր ջոկատներով գործելիս, զանազան հանձ-  
 նարարություններով գործուղումներ կատարելիս, վո-  
 րովե բան ուղեկցելու, զորամասերի հետ կապ պահպա-  
 նելու համար և այլն, — անհրաժեշտ և, վոր ունենա սե-  
 փական պահպանություն: Այդ պահպանությունը պետք  
 և լինի ամեն կողմից, վորովհետև վտանգը կարող և ըս-  
 պասվել բոլոր տեղերից, յեթե հակառակորդը յերկու  
 անցումից (50—60 կիլոմետր) ավելի մոտիկ և: Իսկ պահ-  
 պանության համար դասակն ուղարկում և 3 դիտակալ  
 դեպի առաջ 300—350 մետր հեռավորության վրա կամ  
 ավելի լավ և ձեռքի զնդացիներն մի ամբողջ ջոկ: Դեպի  
 թևերն ու թիկունքը՝ 2-3-ական դիտակալներ մնացած  
 հրաձգային ջոկերից, վորոնք մոտիկ են գտնվում դեռ-  
 քերին: Որինակ, յեթե 2-րդ ջոկը գլխի դետք և ուղարկ-  
 ված, իսկ դասակը գնում և յերկշար սյունով և 5-րդ ու  
 4-րդ ջոկերն առջևից, 3-րդ և 1-ին ջոկն ել (զնդացրա-  
 յին) յետևից, այդ դեպքում դեպի աջ դետքն ուղարկ-  
 վում և 4-րդ ջոկից, դեպի ձախ՝ 5-րդ ջոկից և թիկուն-  
 քը՝ 3-դից: (Տես սխեմա 11):

Յեթե դասակը թևային շարում և կատարում կամ  
 հակառակորդից հեռանում և այդ դեպքում հակառա-  
 կորդի կողմը միշտ խիստ ուժեղ դետք և ուղարկվում  
 և ավելի լավ կլինի ձեռքի զնդացրով: Իսկ այն կողմը,  
 վորտեղից հակառակորդը չի սպասվում, կարելի յե  
 դիտելու համար ուղարկել նաև 2 դիտակալ: Կարևոր  
 և, վոր մեկը բոլոր կողմերն ել նայի և առաջուց իմաց  
 տա դասակին, վորպեսզի նա հավի նման ցեխի մեջ  
 չխրվի:

Այդ պատճառով թևային շարժման ժամանակ հար-  
 կավոր և դեպի հակառակորդը դարձած թևն իբրև դետք  
 ուղարկել ձեռքի զնդացիների մի ջոկ 2—3 հրաձիգնե-



բով, իսկ նահանջելիս Թիկունքի դետքը բաղկացած է լինելու ջոկից :



Յրեմա 11. Դասակի պահպանութիւնը յերթի մեջ

Այդպիսի դետքով բռնվելու կամ կոտորվելու քիչ վնաս կա :

Հակառակորդին աննկատելի լինելու համար պետք է առանձնապես լավ քողարկվել, ունենալ յերկինքը դիտողներ, պատրաստի պահել հակադադները, վորովհետև դասակում սովորաբար քիմիկոսներ չեն լինում և վրջ

վոք չկա, վոր կարողանա առաջուց վորոշել վարակված տեղերը:

Յեթև հակառակորդի ինքնաթիւը սումբեր և նեւտում, այդ դեպքում լավ կլինի անցնել պայթման տեղերի կողքից, վորովհետև կարող են ումբերը լինել քիմիական:

## ԶՈԿԵՐԸ ՅԵՐԹԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԴԵՏՔԵՐ)

Արդեն ասվեց, թե յերբ և ինչպիսի դեպքերում ջուկերը իրիւս դետքեր են ուղարկվում: Սակայն ինչպես են աշխատում դիտակալները ջուկերում:

Ամեն դեպքում եւ պահպանության ուղարկված ջուկը պետք է իր ապահովության համար ուղարկի դիտակալներ: Ուղարկվում են մեկ-յերկու և յերբեմն եւ յերեք զույգ դիտակալներ: Այդ կախված է և՛ տեղանքից և՛ հակառակորդի կողմից սպասվող վտանգից: Բոլորովին բաց տեղանքում կարելի չե ուղարկել միմիայն մեկ զույգ, իսկ ընդհակառակը մացառներում, անտառներում կամ թե նահանջի դեպքում, յերբ հատուկ դժուշություն է պահանջվում, կամ թե թեւային յերթի ժամանակ յերբ հակառակորդը մոտ է, ուղարկվում են 3 զույգ դիտակալներ:

Այդ դետքերը չարժվում են այնպիսի հեռավորությամբ, վոր կարողանան տեսնել իրենց ջուկը (բաց տեղանքում նրանց ուղարկում են մինչև 350 մետր):

Դիտակալների յուրաքանչյուր զույգ պետք է տեսնի հարեան զույգին, վորպեսզի կարելի լինի նրան կրակով ողնել և հաղորդել նրան իր տեսածը: Դիտակալների յուրաքանչյուր զույգը չպետք է բաժանվի: Մեկը մյուսին

վոչ միայն պետք է տեսնի այլև լսի վորպեսզի յերկուսով  
ավելի հեշտ լինի աշխատել :

Նրանք պետք է միմյանց ողնեն : Յերբ մեկը վորեւ  
բան պննում է , մյուսը հակառակորդի կողմը դիտողու-  
թյուն է կատարում : Յերբ կարիք է լինում վորեւ կա-  
րեսը բան հաղորդել ջոկին , նրանցից մեկն արագ կեր-  
պով հաղորդում է ջոկի հրամատարին , իսկ մյուսը շա-  
րունակում է շարժվել :

Իխտակալներին ուղարկելուց հետո մարտիկները  
ջոկի հրամատարի հետ միասին կազմում են կորիզ և  
շարժվում են դիտակալները յետևից : Այստեղից պետք է  
կապ պահպանվի վաշտի կամ դասակի հետ , վորոնք ջոկն  
ուղարկել են յերթային պահպանության :

Յերթը , նայած տեղանքին , շարժվում է դանադան  
շարքերով : Յեթե նեղ ձորակ է , շարժվում է ոճաշար-  
քով , յեթե մացառուտ է՝ միաշար սյունով , վորտեղ  
լայն է՝ դուզաշարով , բաց տեղանքում՝ շղթայով :

Բացի դրանից , միջուկի դնալու կարգը կախված է  
լինելու նաև ջոկի խնդրից : Հարձակման ժամանակ հա-  
կառակորդի մոտիկում ավելի հարմար է շարժվել շղ-  
թայով , քանի վոր այդ կլինի ամենահարմար դրու-  
թյունը առջևից յերեսացած հակառակորդի դեմ կռի-  
լու համար : Իսկ շղթայով պետք է շարժվել նահանջի  
ժամանակ—չուռ կդաս , յերեսող կդարձնես հակառա-  
կորդին—և ահա սրատրաստ կլինիս կռիվու :

Թևային շարժման ժամանակ յերբ ջոկը պահպա-  
նում է թևը , կորիզը շղթայով շարժվել չի կարող , նը-  
րան անհարմար կլինի : Հարկավոր է յերեսը դարձնել  
հակառակորդին , մի կողմ փախչել : Այդ դեպքում ամե-  
նից հարմար է միաշար սյունը կամ ոճաշարքը : Այդ  
ժամանակ մարտիկները կորիզի մեջ դնում են մեկը

մյուսի ծոծրակի յետևից, իսկ հենց վոր կարիք ե լինում, դառնում են աջ կամ ձախ և պատրաստ են լինում կռվելու:

Շատ կարևոր ե այն, թե ինչպես ե դնում դետքի կորիզը: Հակառակորդի հարձակման ժամանակ յուրաքանչյուր վարկյանը թանգ ե, և յեթե դետքը միշտ պատրաստ ե նրան հանդիպելու, սակայն և այնպես դիտակալներին դատարկ ձեռքերով բռնել չեն կարող— նրանք շարունակ կատարում են իրենց խնդիրը:

Այդպես ել շարժվում են դիտակալների զույգերը, դիտի դետքերի զույգերը շղթա յեն կազմում մեկ դծի վրա գտնվելով մեկը մյուսից 250-300 մետր հեռավորության վրա, իսկ զույգի մեջ դիտակալները իրարից հեռու յեն 15-20 մետր, վորպեսզի կարողանան միմյանց տեսնել և լսել:

Կողքի դիտակալները շարժվում են միմյանց յետևից նույնպիսի հեռավորությունների վրա: Թիկունքի դետքերը՝ շղթայով: (Տես պատկերներ 12 և 13):

Ձեռքի դնդացիների ջոկն իբրև դետք ե ուղարկվում, յերբ հակառակորդը մոտիկ ե կամ լրբորեն և ուժգին կերպով մեզ նեղում ե: Նահանջի ժամանակ թիկունքի դետքեր են նշանակվում միշտ ձեռքի դնդացիների ջոկերը: Իր պահպանության համար կորիզը շարունակ զույգ դետք ե ուղարկում այնպիսի հեռավորության վրա, ինչպես հրաձգային ջոկը:

Հակառակորդի հետ բաղիվելիս դնդացիք հակառակորդի նկատմամբ դործում ե 1000 մետր հեռավորությունից: Այդ արվում ե այն ժամանակ, յերբ հակառակորդի մասերն ավելի ուժեղ են և պետք ե նրանց իրեն մոտիկ չթողնել, կանգ առնել տալ, և ինքը պետք ե արագ կերպով առաջ ընթանա:



ԿԱՆՈՒՆ ԴԵՏՔ  
ԿԱՆՈՒՆՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ԿԱՆՈՒՆ ԴԵՏՔ  
ԿԱՆՈՒՆՈՒՆ

ԿԱՆՈՒՆ ԴԵՏՔ  
ԿԱՆՈՒՆՈՒՆ

ԿԱՆՈՒՆ ԴԵՏՔ  
ԿԱՆՈՒՆՈՒՆ

ԿԱՆՈՒՆ ԴԵՏՔ  
ԿԱՆՈՒՆՈՒՆ

ԿԱՆՈՒՆ ԴԵՏՔ  
ԿԱՆՈՒՆՈՒՆ



ԿԱՆՈՒՆ ԴԵՏՔ  
ԿԱՆՈՒՆՈՒՆ

ԿԱՆՈՒՆ ԴԵՏՔ  
ԿԱՆՈՒՆՈՒՆ

# ՀԱՅԵՍՏԱՆԵՐ



Հրաձգային ջոկերն իրենց խնդիրը կատարելով, իրենց կրակով ոգնում են հարևան դետեռին: Ձեռքի զնդացիրն տռավել էս պետք և ոգնի հարևան դետեռի շարժվելուն հրաձգություն կատարելով դեպի հաստակորդը, վարը դանվում և հարևանների դիմացը:

Յեթե դետքը դեմ և առնում հակառակորդին, վորը պաշտպանողական դրության մեջ և, այդ դեպքում նրա խնդիրն և ծածուկ կերպով անցնել պահապան դրամասերի արանքով և զնդացրից կրակ բանալով թևի և թիկունքի վրա, ստիպել հակառակորդի առաջավոր մասերին յետ քաշվել:

Ձեռքի զնդացիրների ջոկն իրեն դետք և ուղարկվում՝ ավելի արագ և հաջող կերպով առաջ շարժվելու համար: Դետեռներ չեն կարող առանց հրամանի յետ քաշվել և պետք և համառորեն ձգտեն առաջ:

Յեթե նրանք իրենք յետ քաշվեն և յետևից յեկող ուղեկալն այդ մասին չիմանա, նա կարող և հանկարծակի րնկնել հակառակորդի կրակի տակ և մեծ կորուստներ կրել:

Միմիայն նահանջի ժամանակ թիկունքի դետեռն առանց հրամանի իրենք յետ են քաշվում այն ժամանակ, յերբ տեսնում են, վոր պահպանվող մասերը յետ են քաշվել աչքբան, վոր հակառակորդի կրակի տակից դուրս են յեկել: Այդ լինում և այն ժամանակ, յերբ ուղեկալը (զառակը) 600-800 մետր հեռանում և:

Սակայն յեթե ուղեկալը դեռ այդքան տարածություն չի անցել և կարող և յենթարկվել զնդացիրների պործոն կրակին, և հակառակորդը համենայն դեպս հուսի և տալիս ձեռքի զնդացիրը, ի՞նչ պետք և անի զնդացիրների ջոկը:

Նրա խնդիրն և պաշտպանել յետ քաշվելը: Նա պետք

է կատարի այդ խնդիրը: Գնդացրային կրակը մոտիկ տարածութիւններէ վրա կարող ե մշտապէս հադառա-կորդի առաջն առնել: Այդ պատճառով ձեռքի դնդացիրը մնում ե դետքում նույնիսկ այն ժամանակ, յերբ նրան սղմում են և թև անց են կատարում: Ծայրահեղ դեպ-քում մնում ե դետքում մինչև վերջին փամփուշտը, մինչև վերջին մարդը: Այդպիսի բոսկներին դիտակալները պետք ե իրենց կյանքը զոհեն, վորպիսով կարողանան հարյուրավոր ընկերներին փրկել: Այդպէս ե աշխատում նաև հաստոցավոր գնդացրի ջուրը:

## ԴԻՏԱԿԱԼՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Յեզրակացման մեջ կտեսնենք, թե ինչպէս եաշխա-տում յուրաքանչյուր դիտակալ:

Դիտակալները պետք ե շարժվեն անընդհատ, վոր-պեսզի կանգ առնել չտան ուղեկալին: Դիտակալը հակա-ռակորդի մոտիկում պետք ե շարժիլ ծածուկ, սակայն այնպէս, վոր ինքը կարողանա ամեն ինչ տեսնել և լսել: Նա վաղելով անցնում ե բաց տարածութիւնները, յեր-բեմն կանգառումներով, յեթե բաց տեղը մեծ ե: Ծածկ-ված տեղերում գնում ե քայլելով: Յերբեմն ձեռնտու-յն թռչելով անցնել մեկ տեղից մյուսը, վորտեղից ա-վելի լավ դիտողութիւն ե կատարվում:

Վորպեսզի ամեն անգամ ղեկուցադրերով չվաղել դեպի ուղեկալը կամ վաշտը, պետք ե սահմանել հա-սարակ պայմանական նշաններ. որինակ՝ հրացանը վերև քարձրացնել գլխարկի հետ միասին, կնշանակի յերեա-ցել են հակառակորդի միայնակ մարդիկ, գլխարկը այս ու այն կողմը թափահարել, կնշանակի յերեացել ե հա-կառակորդի մի խումբ: Այդպիսի կապ պետք ե պահ-



պանի յուրաքանչյուր դիտակալ հարեանների և դետքի կորիզի հետ :

Այն բոլոր առարկաները, վորտեղ կարող ե հակառակորդը թաքնվել, ուշի ուշով զննվում են . որինակ՝ մացառները, անտառը, տունը, դյուղը, ձորերը, կամուրջների տակ և այլն :

Զննությունը կատարում են մեկ կամ մի քանի դիտակալներ, նայած առարկայի մեծությանը : Մացառները նայում են յերկու հոգով : Տունը զննելիս, մեկը զննում ե, մյուսը դիտում : Զննությունը պետք ե կատարել արագ և կանգ առնել չտալ շարժումը : Յերբմն նախապես դեպի առաջ են ուղարկվում նույնպես մի դույզ ուղեկալներ կարևոր առարկան զննելու համար : Բոլոր հանդիպող մարդկանց դիտակալները կանգ են առնել տալիս և դետքի կորիզը նրանց ուղարկում ե ուղեկալը կամ վաշտը :

Հակառակորդի միայնակ մարդկանց հանդիպելիս, վորոնք դետքը չեն նկատում, լավ ե վոր դիտակալները թաքնվեն, և ապա շրջապատեն և նրանց դերի վերցնեն : Այդ անհրաժեշտ ե նրա համար, վորպեսզի կարելի լինի դերիներից հարց ու փորձով վորեւ տեղեկություն իմանալ : Իսկ այն դեպքերում, յերբ հակառակորդի մարդիկ վորձեն վորեւ թուղթ պատռտել, կուլ տալ կամ շարտել, պետք ե այդ թույլ չտալ, վորովհետեւ այդ թղթերը կարող են կարևոր փաստաթղթեր լինել :

Յեթե հակառակորդի միայնակ մարդիկ մոտիկում նկատում են դիտակալներին և փախչում են կամ կրակ են բաց անում դետքի վրա, դիտակալները պետք ե կըրակեն և նրանց՝ ձեռքից բաց չթողնեն : Նույնն ե արվում, յերբ դիտակալները հանկարծակի դեմ են առ-

նում հակառակորդին : Թշնամուս հեռվից տեսնելով , դիտակալները գործում են յերկու կերպ .

Էնթես հակառակորդի խումբը փոքր և և մեր գետքից ավելի թույլ և , այդ դեպքում ծածուկ կերպով առաջ շարժվելով , շրջապատել նրանց և ըստ հնարավորության գերի բռնել : Իսկ յեթե հակառակորդն ուժեղ և , ծածուկ կերպով մոտենալ նրան և կռվով պայքել նրա ուժերը , գործելով մյուս (հարեան) դիտակալների հետ միասին :

Իոլոր դեպքերում նկատածի մասին պետք և իմաց տալ այն ազդանշաններով , Վորոնց մասին պայմանավորվել ենք , կամ թե բանավոր կերպով մեկ դիտակալի միջոցով : Դրա համար ել նրանք աշխատում են դույզգությալ :

Դադարների ժամանակ դիտակալները գիտեցու համար ընտրում են ավելի լավ տեղ , ծածուկ կերպով սողում են դեպի այդ տեղը և քողարկվելով անընդհատ դիտողություն են կատարում դեպի հակառակորդն ու հարեաններ :

Նույնն են անում նրանք նաև , յերբ անշարժ պահանության են ուղարկվում անտատը , գյուղը , լեռները , ճահիճը , անցարանը :

Սերբեք չպետք և հարցնել բնակիչներին , թե ինչպես պետք և անցնել հարկավոր գյուղից կամ հարկ յեղած ուղղությամբ : Դրանով բնակիչները կիմանան , թե մենք ուր ենք շարժվում և նրանցից մեկն ու մեկը այդ մասին հակառակորդին իմաց կտա :

Հարկավոր և միմիայն ուղղակի հարցնել , թե ուր և գնում այս կամ այն ճանապարհը և յերբեմն ձեռնտու յե գնալ մի ուրիշ ճանապարհով և ասպա շուռ դալ ճիշտ ճանապարհի վրա :

Դետքերի աշխատանքն անընդհատ է, ծածուկ և ակտիվ, այդ աշխատանքը պետք է անվտանգ դարձնի վաշտի կամ ուղեկալի (վորտեղից դետք ե ուղարկվել) շարժումը: Պահպանության մեջ ամենադժնգամբը դետքերի աշխատանքն է, վորովհետև նրանք բոլորից առաջ են: Ուստի դետքերի ծառայությունը պետք է ամեն մեկը շատ լավ իմանա:

## IV ԱՆՇԱՐԺ ՊԱՀԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Անշարժ պահպանությունը հարկավոր է այն զորքերի պահպանության համար, վորոնք հանդատանում են:

Յեթե հակառակորդը դեռևս հեռու չէ, որինակ, գտնվում է 3 անցում (90-100 կիլոմետր) հեռավորության վրա, իսկ առջևում կա հետախուզություն, այդ դեպքում դունդը պահպանվում է կամ առանձին պահապան ուղեկալներով, կամ թե առանձին դաշտային պահակներով:

Հրաձգային դումարտակն այդ դեպքում, յեթե գործում է առանձին, պահպանվում է առանձին դիտակետերով: Նույնպիսի դիտակետերով ել պահպանվում են վաշտն ու դասակը: Իսկ յեթե հակառակորդը մոտիկ է (գտնվում է 1-2 անցման-30-60 կիլոմետրի վրա) և կարող է մեկ որվա մեջ հասնել, այդ դեպքում դունդը դեպի առաջ ուղարկում է պահապան ջոկատ:

Պահապան ջոկատի մեջ գնդից սովորաբար ուղարկվում է մեկ դումարտակ և յերբեմն ել նրան տրվում է հրետանի: Անշարժ պահպանությունը միշտ պետք է լինի բոլոր կողմերից: Յերթային պահպանության նըման թևերը և թե՛ թիկունքը պետք է ուղարկել պահապան զորամասեր:

## ՊԱՀԱՊԱՆ ԶՈԿԱՏ ԳՈՒՄԱՐՏԱԿ

Պահապան ջոկատը (գումարտակը) չորեք է թույլ տա հակառակորդին հանկարծակի հարձակվելու հանգընտացող զորքերի վրա, պետք է հակառակորդին կանգ առնել տա այնքան ժամանակ, վորքան անհրաժեշտ է, վոր պահպանվող զորամասը (դունդը) կարողանա բացաղատվել մարտակարգի համար:

Պահապան ջոկատը թույլ չի տալիս հակառակորդի հետախուզությանն անցնել և վոջնչացնում կամ գերի յե բռնում հակառակորդի հետախուզներին:

Բացի դրանից, նա կատարում է չրջակա տեղանքի հետախուզությունը, վորպեսզի հակառակորդը չկարողանա հավաքվել պահպանվող զորքերին մոտիկ և հանկարծակի նրանց վրա հարձակվել: Յեմ վերջապես պահապան ջոկատը հետևում է ոգին, վորպեսզի կարողանա առաջուց զգուշացնել հակառակորդի ավիացիայի յերևալուց:

Այդ խնդիրները կատարելու համար ջոկատը պետք է լինի ուժեղ, պետք է կապ պահի պահպանվող զորամասերի հետ, հետախուզություն կատարի, ամրանա այն դիրքերում, վորոնց նա դրավում է և պետք է առաջ շարժվի, վորպեսզի հակառակորդի դաշտային հրետանին չկարողանա դործոն կերպով գնդակոծել պահապան զորամասերին:

Այդ պատճառով էլ ջոկին տրվում է գնդային և նույնիսկ յերբեմն բաժնյակի հրետանի, կապի միջոցներ (հեռախոսներ, հեծանվորդներ), գնդային հեծյալ հետախուզներ, սակրավորներ և քիմիկոսներ:

Ջոկատը պահպանվող զորքերից առաջ է շարժվում 3-4 կիլոմետր հեռավորության վրա: (տես սխեմա 14):



Պահապան ջոկատի շրջանը բաժանվում է վաշտա-  
յին պահպանության շրջանները: Վաշտային պահա-  
նության շրջանի ճակատը կարող է լինել 1-ից մինչև  
3 կլորձեւոր, նայած թե ինչպիսի ճակատ է տրված պա-  
հապան ջոկատին: Սովորաբար այդ ճակատը գրավում  
են յերկու վաշտ, իսկ յերրորդ վաշտը կազմում է պա-  
հապան ուժանդակը:

Գնդացրային վաշտը գրավում է իր շրջանը կամ  
թե ամենից հաճախ նրա գնդացիրները տրվում են վաշ-  
տերին:



Սխեմա 14. Պահապան ջոկատ

Պահապան վաշտերը  
խրամատավորվում ու  
գողարկվում են, ամեն  
ինչ պատրաստում են  
պաշտպանության հա-  
մար և պահապան  
ուղեկալներ են ու-  
ղարկում առաջ, բաղ-  
կացած 1-ից մինչև  
2 դասակից, իսկ պա-  
հապան ուղեկալները  
գեպի առաջ ուղար-  
կում են պաշտային  
պահակներ՝ բաղկա-  
ցած 1-ից մինչև 2 ջո-  
կից:

Պահապան ուժանդակը (յերրորդ շարանի պահա-  
պան վաշտը) նույնպես պատրաստում է իր շրջանը  
պաշտպանության համար և հարձակման վտանգ չլինելու  
դեպքում տարվում է վոչ հեռու մի ծածկված տեղ,  
վորտեղ և հանդատանում է: Մակայն նրանից՝ տաղնա-  
պի դեպքում նշանակվում է որպեսզի գործառ (1 հրա-  
ձգային դասակ գնդացրային դասակում), վորը լիակա-

տար մարտական պաշտպանության մեջ հանդստա-  
նում ե :

Պահապան ջոկատը հակառակորդի հարձակման  
ժամանակ պետք է դործի վճռական կերպով, պահա-  
պան ուժանդակով հակադրոհների անցնելով կամ թե ու-  
ղարկելով նրան թևերը հակառակորդի թևից հարվածե-  
լու համար : Առանց պետի հրամանի պահապան ջոկատը  
վոչ մի դեպքում չի կարող նահանջել :

Գիշերը վրա հասնելով վաշտային պահապան շըր-  
ջանների արանքներում դրվում են լրացուցիչ դաշտա-  
յին պահակներ և դադոնքներ : Դեպի թևերը կարող են  
հանվել լրացուցիչ ուղեկալներ : Առջևում պահպանու-  
թյունը նույնպես կարող է խտացվել դադոնքներ և  
դետքեր ուղարկվելով :

Հենց վոր գորքերը սկսում են առաջ շարժվել,  
պահապան ջոկատը կարող է փոխվել գլխի ջոկատի :  
Այդ այն ժամանակ է տեղի ունենում, յերբ գլխի ջո-  
կատի մեջ ուրիշ դորամաս չի ուղարկվում :

Անցնելով անշարժ պահպանությունից յերթային  
պահպանության, պահապան ջոկատը վերցնում է ա-  
ռաջուց ավելորդ յեղած ուղեկալները և սկսում է նը-  
շանակված ժամին շարժվել : Այդպիսի դեպքերում  
չվերցված պահապան ուղեկալները դառնում են յերթա-  
յին ուղեկալներ, իսկ դաշտային պահակները՝ դետքեր :


Յերթային պահպանության մեջ այլ դորամաս նը-  
շանակելու դեպքում պահապան ջոկատը մնում է տե-  
ղում : Նրա միջից է անցնում նոր նշանակված գլխի ջո-  
կատը և միմիայն գլխի ջոկատն անցնելուց հետո պահա-  
պան ջոկատը պատրաստվում է ճանապարհ ընկնել  
և միանում է գլխավոր ուժերի դորասյանը :

Նահանջի ժամանակ պահապան ջոկատն սկսում է

յետ նահանջել այն ժամանակ, յերբ նրա հետեւից յետ  
քաշվելը պաշտպանելու համար նշանակված թիկուն-  
քի ջոկատը դրավում և դիրքերը: Պահապան ջոկատը  
մարտակարգով յետ և քաշվում թիկունքի ջոկատի  
դժով, իսկ հետո արդեն ճանապարհին կռուակվում և  
շարունակում և զորասյունով նահանջել:

## ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ԱՆՇԱՐԺ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանձին զործող գումարտակը հանդստում պահ-  
պանվում և մեկ կամ յերկու պահապան ուղեկալներով  
(1-ական դասակ), վրոնց տրված և 1-ական զնդա-  
յին դասակ, յերբեմն ել գումարտակային կամ զնդա-



յին հրանոթներ՝ հա-  
կառակորդի զրահա-  
մեքենաների դեմ կրո-  
վելու համար: Այդ  
ուղեկալները շարժ-  
վում են գումարտա-  
կից 2 կիլոմետրից վոչ  
ավելի հեռավորու-  
թյան վրա, վորպեսզի  
գումարտակը միշտ  
կարողանա ժամանա-  
կին նրանց հասնել:  
(Տես սխեմա 15)

Սխեմա 15. Գումարտակի տնդարժ  
պահպանութուն

գաղտնալին պահակներ և զեաքեր: Պահապանու-  
թյան բոլոր զորամասերի խնդիրներն ու ծառայությու-  
նը նույնն են ինչ վոր պահապան ջոկատի կազմում:

Պահապան վաշտն ստանալով իր շրջանը, դրավում է նրան ուղեկալներով (1-2 դասակ), վորով 1-2 ուղեկալները (№1 և №2) ունենում են իրենց համարները, իսկ յերրորդը կոչվում է գլխավոր ուղեկալ և հանդիսանում է ոժանդակը:

Գլխավոր ուղեկալի մոտ է գտնվում նաև պահապան վաշտի հրամանատարը: (Տես սխեմա 14):

Յուրաքանչյուր ուղեկալ ստանում է պահապանության իր շրջանը:

Ուղեկալը տեղավորվում է այնպես, վոր նրանց միջև կրակային կապ լինի (մեկ ուղեկալի կրակը կարող է հասնել այն տեղանքին, վորին կարող է հարևան ուղեկալը զնդակոծել): Ուղեկալները, ինչպես արդեն ասվեց, իրենց պահապանության համար առաջում դաշտային պահակներ են դնում:

Հակառակորդի հարձակման ժամանակ պահապան վաշտը կոչվ է մղում այնպես, ինչպես պաշտպանության մարտում, սակայն յետ քաշվել կարող է միայն պահապան ջոկատի պետի հրամանով:

## ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ՎԱՇՏԻ ԱՆՇԱՐԺ ՊԱՀ- ՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանձին գործող վաշտը պահպանվում է առանձին դաշտային պահակներով, վորոնց նա դնում է իր տեղավորումից վոչ ավելի քան 2 կիլոմետր հեռավորության վրա:

Այդ հարկավոր է նրա համար, վորպեսզի դաշտային առանձին պահակները առանց վաշտի ուղնության մաս-մաս չջարդվեն:



Դաշտային առանձին պահակներ խնդիրներն ու ծառայությունը նույնն է, ինչ վոր ուղեկալից ուղարկվող պահակներինը:

## ՊԱՀԱՊԱՆ ՈՒՂԵԿԱԼ (ԴԱՍԱԿ) . ՀԱՄԱՐԱՎՈՐ ՈՒՂԵԿԱԼՆԵՐ

Պահապան ուղեկալի մեջ ուղարկված դասակը հաճախ ուժեղացվում է դնդացրային դասակով: Այդ անհրաժեշտ է պահպանության խնդիրները լավ կատարելու համար:

Ստանալով պահապան վաշտի հրամատարից իր շրջանը պահպանության համար, պահապան ուղեկալը առաջ է շարժվում մարտի համար հարմար դիրք:

Այդ բնագծին հասնելուց անմիջապես հետո անմիջական պահպանության համար ուղարկվում է պահապան պոստ (ժամապահն իր ողնականի հետ):

Այդ պոստը քողարկվում է և դիտողություն է կատարում հակառակորդի կողմը: Այդ պահապան պոստի պաշտպանության տակ ուղեկալի պետը (դասակի հրամանատարը) նշանակում է դաշտային պահակներ յուրաքանչյուրը 1-ից մինչև 2 ջոկ:


Այդ դաշտային պահակները դրավում են կարևոր ուղղությունները, ճանապարհները, ճանապարհների խաչմերուկները կամ բարձրունքները:

Յուրաքանչյուր դաշտային պահակ իր պահպանության համար նույնպես տալիս է պահապան պոստ 2 մարտիկից (ժամապահ և ժամապահի ողնական): (Տես սխեմա 16):

Բացի դաշտային պահակներից ուղեկալների չորջանում ու այն տեղերը, վորտեղ չեն կարող դիտել

դաշտային սլահակները, առաջ են շարժվում գաղոն-  
քներ (2—3 մարդ) և ուղարկվում են պարեկներ (ПАТ-  
РУЛЬ (2—3 մարդ) տեղանքը ղննելու համար:

Այդ բանը պետք է անել այնտեղ, վերտեղ կան մա-  
ցառներ, շենքեր: Ուղեկալի պետք դաշտային սլահա-  
կների ծառայությունն ստուգելու համար ուղարկում և  
պարեկներ բաղկացած 2—3 պարեկապաններից (ПАТ-  
РУЛЬНЫЙ) և պարեկներ հարևան ուղեկալների հետ  
կապ սլահպանելու համար: Ողբ դիտելու համար դուրս  
է բերվում դիտակայան: Սահմանվում է ոգային և  
քիմիական տաճնապի աղդանշան և հայտնվում է բո-  
լոր սլահակներին:



Սխեմա 16. Պահպան ուղեկալ

փար. կաղմել մեր ուժերի մասին:

Ուղեկալի մնացած մար-  
դիկ պաշտպանութլան հա-  
մար պատրաստելով ամեն  
բան, հավաքվում են իրենց  
պահապան պոստի մոտի-  
կում մի ծածուկ տեղ և լիտ-  
կատար մարտական պատ-  
րասաւթյամբ դատավոր-  
վում են: Պահապան ուղե-  
կալի բոլոր զորամասերի  
տեղավորութլունը պետք  
է լինի քողարկված. վո-  
րովհետև անշարժ պահ-  
պանութլամբ հակառակոր-  
դը կարող է գաղա-

## ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀԱՊԱՆ ՈՒՂԵԿԱԼ

Առանձին սլահապան ուղեկալները ծառայութլունը  
կատարում են նույն կարգով, ինչ վոր համարավոր  
ուղեկալները:

Առանձին դործող գումարտակի պահպանության  
ժամանակ դուրս են բերվում առանձին ուղեկալներ :  
(Տես այդ մասին յեղած գլուխը) :

## ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԴԱՍԱԿԻ ԱՆՇԱՐԺ ՊԱՀ- ՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանձին դործող դասակը պահպանվում է տեղա-  
կայաններով՝ տեղանքի գննության համար առանձին  
պարեկներ ուղարկելով հանդերձ :

Դասակների համար միանդամայն բավական է ան-  
միջական պահպանությունը, ժողը դիտողությամբ ա-  
պահովում է նրանց՝ անմիջական հարձակումից : Յեթե  
դասակը պահպանության մեջ ուղարկի ավելի մեծ ու-  
ժեր, քան դիտակայանները, այդ դեպքում նա միմիայն  
իր ուժերը մաս-մաս կվոչնչացնի :

## ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՀԱԿ (ՀՐԱԶԳԱՅԻՆ ԶՈԿ)

Դաշտային պահակ նշանակված հրաձգային ջոկը  
տեղավորվում է ուղեկալից 1-2 կիլոմետր հեռավորու-  
թյան վրա դիտողության համար մի հարմար տեղում :

Դաշտային պահակին ցույց է տրվում տեսողու-  
թյան և գնդակոծման տեղամասը : Նա պետք է յերկու  
կողմերում տեսնի հարեան պահակներին և ըստ հնարա-  
վորության իր ուղեկալին :

Դաշտային պահակը պաշտպանության համար դիրք  
և պատրաստում, թողարկում է նրան և իր տեղամասում  
չափում է մինչև տեղական առարկաները յեղած տարա-  
ծությունը :

Դաշտային պահակի բոլոր մարտիկները պետք է  
դիտենան ինքնաթիռների յերեկալու և քիմիական հար-

ձեռնարկն ազդանշանը և սլաքաբաժնի լինելն հակաքիմիական պաշտպանութեան համար (դիմակները պետք և ստուգվեն) :

Յեթե դաշտային պահակն իր առջևում ունի լաշի տեսաշրջանով բաց տեղանք, նա 30-50 քայլ հեռավորութեան վրա դուրս ե բերում մեկ ժամապահ դիտողութիւն կատարելու ամբողջ տեղամասում :


Յերբեմն ել պահակի առջևին մոտիկ տեղանքը թույլ չի տալիս տեսնել ամբողջ տեղամասը կամ թե հակառակորդի կողմից լինում են դադարների մատուցոյցներ, վարոյնցով հակառակորդը կարող ե հանկարծակի մոտենալ դաշտային պահակին :

Այդ դեպքում իր ժամանակին վտանգից նախազգուշանալու համար պետք ե պահապան պոստը դաշտային պահակից 50 քայլ առաջ տանել : Յեւ ժամապահին տըրվում ե ոգնական ժամապահ : Ժամապահի ոգնականը տեղավորվում ե ժամապահից 10-15 քայլ հեռավորութեան վրա :

Յերբեմն այնպես ե լինում, վոր պահապան պոստը ցերեկը տեղավորվում ե վոչ թե առջևում, այլ յետևում . որինակ՝ բարձունքը դրավում ե դաշտային պահակը, քանի վոր այդ լավ դիրք ե մարտի համար . առջևում բաց դաշտն ե, իսկ յետևում մի խումբ ծառեր : Վորովհետեւ նրանցից ամեն բան յերևում ե, դրա համար ձեռնտու յե տեղավորել ծառերի վրա դաշտային պահակի յետևը : (Տես պատկեր 17) :

Յեթե ժամապահը դիտում ե ծառից, կտուրից կամ այլ տեղից, այդ դեպքում նրա ոգնականը գտնվում ե ներքևում և հարկ յեղած դեպքում դաշտային պահակին հայտնում ե նկատածի մասին :





Պատկեր 17. Դաշտար/Նո պաշտար

Դաշտային պահակի լավագույն զոդսրկման համար սահմանվում են պայմանական նշաններ այն ձևով ինչպես ցույց ենք տվել դետքերի համար: Ժամապահին ցույց է տրվում այն տեղանքը, վորը նա պետք է զննի և վորի վրա պետք է առանձին ուշադրություն դարձնի (որինակ, մացառներ կամ ձորակ): Ժամապահները պետք է խիստ ուշադիր լինեն նաև դեպի իրենց տեղամասը: Յերկդիտակ ունենալու դեպքում ժամապահին տրվում է յերկդիտակ:

Ժամապահներն և նրանց ոգնականներին փոխում են մեկ կամ յերկու ժամից հետո: Մեկ ժամից հետո փոխում են այն ժամանակ, յերբ լինում է խիստ շոգ և ցուրտ կամ թե, յերբ մեծ տեղամաս է և շատ դժվար է դիտել:

## ՊԱՀԱՊԱՆ ՊՈՍՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ժամապահը, բացի յուրայիններից, վորոնց նա ճանաչում է դեմքով, բոլոր մարդկանց անխտիր կանգնեցնում է 30-40 քայլ հեռավորության վրա: Ժամապահի ոգնականը պահակատիկան նշան և անում մարդկանց բռնելու մասին (որինակ ձեռքը վեր բարձրացնելով): Դաշտային պահակի պետք ծածուկ կերպով մեկ կամ մի քանի մարտիկների հետ միասին մոտենում է բռնվածներին: Յեթե բռնվածը մեր տարազով է, պահակապետը կամացուկ նրանից անցաբան և հարցնում: Անցաբանն լմացողներին նա բաց է թողնում, չիմացողներին բռնում է և ուղեկալի պետի մոտ լրատար և ուղարկում խնդրելով, վոր ուղեկցորդ (РОХОЙ) ուղարկի:

Դաշտային պահակի պետը բռնածներին հանձնում է այդ ուղեկցորդին: Անցաբան չիմացող բռնվածներին

լրատարների զեկուցադրերի հետ միասին դաշտային պահակի պետը ինքը դաշտային պահակի մարտիկներից մեկի ուղեկցությամբ ուղարկում է պահապան ուղեկալի պետի մոտ :

Յերբ ժամսպահը կանգ է առնել տալիս փախըստակին , դաշտային պահակի պետը նույնպես մոտենում է նրան , հրամայում է գնքը ցած դնել , իրենից մի կողմ քաշվել և դեմքը դարձնել հակառակորդի կողմը : Իսկ ինքը լրատար և ուղարկում ուղեկալի պետի մոտ ուղեկցորդ խնդրելու և սպասում է նրա գալու՜ն , թույլ չտալով փախստակին յերեսը մեր կողմը դարձնելու :

Այնուհետև , յերբ ուղեկալից ուղեկցորդը գալիս է , նրան և հանձնում փախստակին :

Հակառակորդի կողմը դնացող միայնակ մարդիկ , ուլքեր ել վոր լինին , յեթե անցաբանը չդիտեն , չեն կարող անցնել :

Յերբմն հակառակորդը ցանկանալով վորևե խնդրի մասին համաձայնության դալ մեր զորքերի հետ , մեզ մոտ բանադնացներ (պարլամենտյորներ) և ուղարկում :

Նրանց ընդունելու համար նշանակվում է ժամանակ և տեղ : Այդ ժամանակին գալիս են հրամանատարական կազմից առանձին մարդիկ , վորոնք հանդիպում են բանադնացներին : Այդ ամենի մասին առաջուց կարգադրություն և արվում այն ուղեկալին և դաշտային պահակին , թե վորտեղ են գալու բանադնացները : Բանակցությունների համար մեզ մոտ յեկող և մեզանից հեռացող բանադնացների աչքերը կապվում են : Յեթե նրանց ընդունելության մասին հրաման չկա , բանադնացները չեն ընդունվում :

Յեթե դաշտային պահակին մոտենում են հակառա-

կորդի միայնակ հետախուզողները կամ նրա մամուր խոմ-  
բերը, ժամապահը նրանց հետվից նկատելով, այդ մա-  
սին ժամապահի ողնականի միջոցով հայտնում ե դաշ-  
տային պահակի պետին :

Դաշտային պահակի պետն աշխատում ե հակառա-  
կորդին թույլ տալ մոտենալու, իսկ այնուհետև աշխա-  
տում ե նրան բռնել կամ վռնչացնել : Դրա համար նա  
յերբեմն ծածուկ կերպով իր դաշտային պահակին ա-  
ռաջ ե շարժում և այնուհետև շրջապատում ե հակառա-  
կորդին կամ նրան կոտորում ե :

1919 թվին սպիտակներին քչեցինք կաշեմ կայա-  
րանից և այնտեղ տեղավորվեց մեր ջոկատը, վորն ան-  
շարժ պահպանություն դրեց : Յերեկոյան նկատվեց մեր  
կայարանին մոտեցող մի ձիավոր : Ժամապահն այդ մա-  
սին հաղորդեց պահակապետին և նա հանկարծակի շրջա-  
պատեց նրան և բռնեց : Պարզվեց, վոր նա մի լրատար  
հր, վորը հրաման եր բերել սպիտակ ջոկատին, վորն  
այլևս կայարանում չեր : Այդ հրամանից մենք իմացանք,  
թե ինչ են անելու հակառակորդները հետևյալ որը և  
նրանց վրադիմիրովկա կայարանի մատ՝ ջարդեցինք :  
Յերբեմն այդպես կարեւորություն ե ունենում հակառա-  
կորդի մեկ զինվորին բռնելը :

Հակառակորդի սպանված զինվորները պետք ե տար-  
վեն ուղեկալը : Վռչինչ և վռչ մի ջնչին բան թույլ չե  
տրվում նրանցից վերցնել, վորովհետև սպանվածի մոտ  
գտնված առարկաներով կարելի յե շատ բան իմանալ :  
Բռնված գերիներին հարց ու փորձի յե յենթարկում ու-  
ղեկալի պետը և այնուհետև ուղարկվում թիկունքը :

Հակառակորդի հանկարծակի յերեւալու ժամանակ  
ժամապահը կատարում ե արձակյուն և դաշտային պա-  
հակը պատրաստվում ե մտրտի :



Հակառակորդի խոշոր ուժերի հարձակման ժամանակ դաշտային սահակը կռիվ և մղում այնպես, ինչպես պաշտպանության ժամանակ և կարող և յետ քաշվել միմիայն պահապան ուղեկալի պետի հրամանով:

Յերբ հակառակորդը հարձակվում և հարևան դաշտային սահակի կամ թե սահակների արանքների վրա, ժամապահն այդ մասին հաղորդում և դաշտային սահակի պետին:

Այդ ժամանակ դաշտային սահակը պետք և աշխատի իր հարևանների հետ միասին բռնել, ջարդել կամ վրջնացնել կազմալուծված հակառակորդին:

Հետ քաշվելու հրամանից հետո հակառակորդի ճնշման ներքո դաշտային սահակը նախ հեռացնում և իր պահապան պոստը և ապա մաս առ մաս սկսում և ինքը հեռանալ:

Դաշտային սահակը պետք և նահանջի իր ուղեկալի թևը, կամ թե կրակային կետերի արանքը, վորտեղի չծածկի ուղեկալի դնդակոծումը:

## ԳԱՂՈՆՔՆԵՐ

Գաղտնքներն առաջ են շարժվում այն ծածուկ տեղերով, վորտեղ հակառակորդը կարող և աննկատելի կերպով անցնել պահապան պոստերի կամ դաշտային սահակների դժի վրայով:

Այդ կարող և լինել ձորերում և ձորալններում, վորոնք պատած են մացառներով, յեղեղնով և բույսերով պատած առուների և գետերի հովիտներում:

Այդպիսի դեպքերում յերբեմն ցերեկը, իսկ գիշերը միշտ՝ ուղարկում են գաղտնքներ բաղկացած 2-3 մարտիկից:

Գաղտնքները չեն փոխվում, նրանք դրվում են ամբողջ գիշերը կամ ցերեկը և այնուհետև իրենք նշանակված ժամին վերադառնում են ուղեկալը:

Գաղտնքներն ամենից առաջ ծառայում են ուղեկալին վտանգից նախադգուշացնելու համար, յեթե գաղտնքին և հանդիպում հակառակորդի խոշոր խումբ:

Յեթե հակառակորդի մանր մասերը փորձում են անցնել ծածուկ տեղերով, գաղտնքի խնդիրն է դառնում նրանց գերի վերցնել կամ վռնչացնել: Գաղտնքներն իրենցից վոչ վոքի չեն կանգնեցնում, հարց ու փորձ չեն անում և գործում են հանկարծակի, իբրև հակառակորդի դեմ դարան մտածի:

### ՊԱՐԵԿ՝ ՏԵՂԱՆՔԸ ԶՆՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Տեղանքը զննելու պարեկն դադարկվում է ուղեկալից, յեթե դիտողության շերտի առջևում կա ծածուկ տեղ, վորը պահապան պոստերը (մացառուտ, ձոր, անտառ) չեն կարող տեսնել:

Պարեկում նշանակվում են 2-3 մարտիկ: Նրանցից մեկն ավազ է: Ուղեկալի պետը ցույց է տալիս պարեկին, թե ինչ պետք է զննել և մինչև յերբ կատարել դիտողությունը:

Պարեկը զննում է ցույց տված շրջանը և մնում է այնտեղ դիտողություններ կատարելու համար և յերբեմն շրջում է տեղամասը: Հակառակորդի միայնակ մարդիկ և մանր խմբերը բռնվում են, իսկ յերբ չի հաջողվում նրանց գերի բռնել, նրանք վռնչացվում են: Պարեկը լուր է տալիս հակառակորդի խոշոր խմբերի և նրա հարձակվելու մասին: Ոգնում է դաշտային պահակներին կռիվ մղել հակառակորդի հետախույզների դեմ:

Առաջին զննությունից հետո պարեկը տեղեկու-

թյուն և տալիս հակառակորդի կողմից ղեպի մեր ան-  
չարժ պահպանությունը յեղած հարմար մատուցների  
մասին, յեթե այդպիսիները գտնվում և: Սահմանված  
ժամից հետո պարեկը վերադառնում և ուղեկալը:

## ՊԱՐԵԿ՝ ՀԱՐԵՎԱՆ ՈՒՂԵԿԱԼՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հարևան ուղեկալների հետ կապ պահպանելու հա-  
մար նշանակվում և պարեկ բաղկացած 2-3 մարդուց:  
Այլադ պարեկապանը գնում և հարևան ուղեկալը և  
պատմում և, թե ինչ և արվում իրենց մոտ ուղեկալում  
և ինչպես և նա դասավորված: Այնուհետև հարևան ու-  
ղեկալի պետի հրամանով վերադառնում և:

Այստեղ, իր ուղեկալի պետին հաղորդում և այն ա-  
մենի մասին, ինչ վոր իմացել և հարևան ուղեկալում և  
ինչ վոր հաղորդելու համար ստացել և:

Մեկ ուղեկալից մյուսին անցնելու ճանապարհին՝  
պարեկը ղեռնողություն և կատարում հակառակորդի  
կողմը և ուղեկալների արանքներում բռնում և միայ-  
նակ հետախույզներին, վորոնք անցել են դաշտային  
պահակների դժից կամ նրանց վոչնչացնում և: Յեթի  
վորեւ կասկածելի բան և նկատում, հաղորդում և այն  
ուղեկալի պետին, վորին նա շուտով հասնելու յե (հա-  
րևան, կամ իր ուղեկալի այդ միևնույն և), վորպեսզի  
ուղեկալը կարողանա նկատածն ստուգել և միջոցներ  
ձեռք առնել:

## ՊԱՐԵԿ՝ ԴԱՇՏԱՅԻՆ ՊԱՀԱԿՆԵՐԻ ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Դաշտային պահակներն ստուգող պարեկը նույնպես

նշանակված և 2-3 մարդուց՝ իրեն դիտելու ունենալով ջրակի հրամանատարին :

Նա այցելում և ուղեկալից նշանակված դաշտային պահակներին և ստուգում և՛ արդյո՞ք ճիշտ են կատարում նրանք իրենց ծառայությունը, կա՞ր արդյոք պահապան պոստ, չե՞ն ճեմած պահակում, լսո՞րն են պատրաստ մարտի համար և այլն :

Բոլոր պահակներին այցելելով պարեկը վերադառնում և ուղեկալը, և ավագ պարեկապանը (ջոկի հրամանատարը) զեկուցում և ուղեկալի պետին, ինչ վոր տեսել և : Մեկ դաշտային պահակից մյուսը շարժվելու ժամանակ պարեկը դիտում և արանքները և հակառակորդի հետախույզներին յերևան բերելու դեպքում, ողջում և դաշտային պահակներին՝ նրանց բռնելու կամ վռնչացնելու :

## Y ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԻՐԱՅ Ե ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարտական պահպանություն և ուղարկում ամեն մի զորամաս, վորը մարտի յե ծավալվում կամ սպասում և հակառակորդի հետ շուտով բաղխվելու :

Հարձակման ժամանակ, յերբ դամարտակներն ստանում են առաջ շարժվելու իրենց շերտերը, ուղարկում են մարտական պահպանություն :

Մարտական պահպանությունը միշտ նրա համար և ուղարկվում, վորպեսզի նույնիսկ յուրաքանչյուր մանր դորամաս առջևում ունենա իր մարդկանց, վորոնք ողնեն կատարելու մարտական խնդիրը, հակառակորդին լավ ճանաչելու և առաջուց զդուլացնելու թշնամու



հարձակման մասին: Մարտական պահպանությունը կռվում է հակառակորդի պահապան զորամասերի դեմ և դյուրություն է տալիս իր զորամասին տուաջ շարժվելու:

Պաշտպանության ժամանակ մարտական պահպանությունն ուղարկում է առաջին շարանի դումարտակներին (առաջավոր դումարտակներ): Յեթե մի ամբողջ դուռը է դրավում պաշտպանողական բնադիծը, միևնույն է, մարտական պահպանությունն ուղարկում է ամեն մի դումարտակ: Այդ հարկավոր է պահպանությունն ուղարկելու հարմարության համար, վորպեսզի մարտական պահպան զորամասերն ամուր կապված լինեն պահպանվող զորամասերի հետ և յետ քաշվելու ժամանակ միմյանց չխառնվեն:

Պաշտպանության ժամանակ մարտական պահպանության խնդիրներն են՝ թույլ չտալ հակառակորդին հաստացավոր զնդացիլներով զնդակոծելու մեր զորքերին, բռնել հակառակորդի հետախույզներին և թույլ չտալ նրանց պարզելու, թե ինչպես են տեղավորված մեր զորամասերը պաշտպանության ժամանակ: Բացի դրանից, մարտական պահպանությունը պետք է համառ կերպով հակառակորդի առաջն առնի, վորպեսզի նա պահպանությունը ճնշելու համար ավելի ծավալի իր ուժերը՝ հետևակի ու հրետանու ուժերը: Այդ հարկավոր է հակառակորդի ուժերը հետախույզելու համար:

Այդ բոլոր խնդիրները մարտական պահպանությունը կատարում է վոչ միայն իր զնդացիլների և հրացանների կրակով, այլև դրոհների յև դիմում փոքրիկ զորամասերով, վորտեղ այդ պետք է լինում:

Մարտական պահպանության ուժը կախված է զո-

բամասի կազմից, տեղանքից և այն բանից, թե հակառակորդն ինչպես ե գործում՝ վճռակա՞ն կերպով, թե՞ թույլ և շա՞տ ուժ ունի նա արդյոք:

Պահպանվող զորքերին հաստոցավար զնդացիներն ի կրակից պաշտպանելու իր խնդիրը կատարելու համար մարտական պահապան զորամասերը պետք և առաջ շարժվեն մոտ 2-3 կիլոմետր հեռավորության վրա:

Յերթային և անշարժ պահպանությունից տարբերվելու համար մարտական պահապան զորամասերը հատուկ անուն չունեն, այլ յուրաքանչյուր ստորաբաժանում այնպես ե կոչվում, ինչպես միշտ, միայն ավելացնելով դրան «մարտական պահապան» բառերը: Որինակ՝ մարտական պահապան դառակ, մարտական պահապան քնի:

## ԳՈՒՄԱՐՏԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գումարտակը մարտական պահպանության մեջ՝ թե՛ հարձակման և թե՛ պաշտպանության ժամանակ մեծ մասամբ ուղարկում ե մեկ հրաձգային դասակ տալով նրան հաստոցավոր զնդացիներ:

Սակայն հարձակման ժամանակ յերբեմն պետք և լինում ուղարկել և մի ամբողջ վաշտ՝ տալով նրան գումարտակային կամ զնդային հրետանի: Այդ տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ հարձակում ե կատարվում լայն շերտով, կամ յերբ նախատեսվում ե, վոր հակառակորդը մեծ ուժերով հանկարծակի հարված և հասցնելու:

Բացի դրանից, գումարտակի թևը բաց լինելու դեպքում նրան պաշտպանելու համար ուղարկվում ե դարձյալ մեկ դասակ: Մարտական պահապան դասակը

կամ վաշտը շարժվում են գումարտակի առաջից 1½—3 կիլոմետր հեռավորության վրա, ունենալով իրենց առջևում գլխի դետք:

Հակառակորդի հետախուզությանը կամ պահպանությանը հանդիպելիս մարտական պահապան դասակը (վաշտը) նրանց դեմ կռվում և և յետ և շարտում: Դրանում նրան ոգնում են հրետանին և զնդացիները:

Հենց վոր գումարտակը ծավալվում և մարտական պահպանությանը (դասակը կամ վաշտը) ստանալով մարտական խնդիրները մյուս զորամասերի հետ միասին կռվի և մղում:

Պաշտպանության մեջ գումարտակը մարտական



Սխեմա 18 Մարտական պահպանությունը պաշտպանության ժամանակ

պահապան դասակ և ուղարկում լեռնորդ շարանի վաշտից (յեանի վաշտից): Մարտական պահապան դասակն ուժեղացվում և հաստոցավոր զնդացիներին դասակով և բացի դրանից նա պաշտպանվում և հրետանու կրակով: (Տես սխեմա 18):

Մարտական պահապան դասակը դասավորվում և այնպիսի տեղերում, վորտեղից առջևի ամբողջ տեղանքը լավ և յերևում և վորտեղից հարմար և կրակ տեղալը: Այդ դասակը պետք և տեսնի հարևան մարտական պահպանությունը և նրանց հետ կրակային կապ ունենա: Մարտական պահապան դասակը խրամատավորվում և քողարկվում և: Յեթե ամբողջ տեղանքը դասակի պրավաժ դիրքից չի յերևում, այդ տեղանքը ղննելու

Համար կարող են ուղարկվել պոստեր և դետեքեր (պարեկներ) : Բացի դրանից, գիշերը, յերբեմն ել ցերեկը ծածուկ տեղերում գրվում են նաև գաղտնիներ (տես «Անշարժ պահպանություն») : Դասակին ցույց ե տրվում, թե վոր ճանապարհով և ուր պետք ե յետ քաշվի : Յետ քաշվելու ժամանակ նա չպետք ե վրիթի դումարստակի կրակը :

Մարտական պահապան դասակը խնդիր ե ստանում կամ կանգ ե առնում մի վորոշ ժամ, իսկ այնուհետև յետ քաշվում, կամ թե պարզում ե՝ հակառակորդի ինչպիսի ուժեր են հարձակվում և ապա կռվելով յետ ե քաշվում (դումարտակի հրամանադրի՝ յետ քաշվելու վերաբերյալ արած կարգադրությունից հետո) :

### ՎԱՇՏԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հենց վոր վաշտը հարձակման ժամանակ ստանում ե իր մարտական խնդիրը և սկսում ե առանձին շարժվել, հետախուզության և իր պահպանության համար ուղարկում ե մարտական պահապան ջուկ : Մարտական պահապան ջուկի մեջ միշտ նշանակվում ե թեթև գնդացրային ջուկ, վորը յերբեմն ուժեղացվում ե մեկ հրաձգային ջուկով :

Մարտական պահապան ջուկը շարժվում ե վաշտից 600 մետրից—900 քայլից վոչ ավելի հեռավորության վրա, վորպէսզի վաշտը կարողանա ամեն ժամանակ հրացանների դործոն կրակով պաշտպանել իր պահպանությանը :

Մարտական պահապան ջուկը պետք ե կատարի հետևյալ խնդիրները՝ 1) ապահովել վաշտը անպատեղի հարձակումից, 2) իմանալ, թե ինչպիսի ուժեր կան վաշտի դիմացը. իսկ յեթե հակառակորդը պաշտպան-



վում և, այդ դեպքում՝ վերսեղ են տեղավորված նրա  
դնդացիներն ու հրաձիգները, 3) դռնել ծածուկ տեղի-  
րը (ձորեր, մացառներ, անտառ) վաշտն առաջ շարժե-  
լու համար, 4) դռնել վաշտի համար այն տեղը, վո-  
րտեղից նրան հարմար և հարձակվել արդեն վոչ թե ամ-  
բողջ վաշտով, այլ բացառապես իր ձեռքի և ոտների  
դասակ, իսկ հետո ջոկերով և 5) դռնել հաստոցավոր  
դնդացիներին կրակելու համար հարմար տեղեր:

Այդ բոլոր խնդիրները կատարելու համար մարտա-  
կան պահապան ջոկի հետ միասին հաստոցավոր դնդա-  
ցիներին շարժվում են հետախույզներ, իսկ յեթե վաշ-  
տին արված են դուժարտակային հրանոթներ, նույն-  
պես՝ գումարտակային հրանոթներից:

Բացի դրանից, քիմիական հետախույզություն կա-  
տարելու համար միշտ մարտական պահապան ջոկի հետ  
պետք է լինի վաշտի քիմիական հրահանգիչը:

Պաշտպանության ժամանակ, յերբ վաշտը գործում  
է առանձին կամ բաց թեում, հակառակորդի կողմն ու-  
ղարկվում և մարտական պահապան ջոկ:

Ամենից լավ կլինի դուրս բերել հրաձգային ջոկով  
ուժեղացված հաստոցավոր դնդացիների ջոկ: սակայն յեր-  
բեմն բավական կլինի նաև մեկ թեթև-գնդացրային ջո-  
կը: Այդ կախված է տեղանքից և հակառակորդի ուժե-  
րից:

Յեթե տեղանքը բաց է և հեռուն յերևում է, թեթև  
դնդացիներն են բավական և. յեթե ծածկված է, այդ դեպ-  
քում հարկավոր է հաստոցավոր դնդացիք՝ հրաձիգ-  
ներով:

Մարտական պահապան ջոկը առաջ է շարժվում  
500-1000 մետր (կախված է տեղանքից), խրամատա-

վորվում, քողարկվում եւ ղիտողություն եւ կատարում  
դեպի առաջ: Հետախուզության յերևալու դեպքում նը-  
րան բռնում ե: Յերբ սկսում են հակառակորդի պահա-  
սան մասերը մոտենալ, գնդացրի կրակով ստիպում ե  
նրանց լիովել: Դրանով մարտական պահպանությունը  
մոտավորապէս կարող ե պարզել, թե ինչպիսի ուժեր են  
հարձակվում ե սկսում ե յետ քաշվել դեպի իր վաշտը՝  
առաջուց նշան արված ծածուկ ճանապարհով վաշտի  
հրամանատարի ցույց տված կետը: Դրանով վերջանում  
ե մարտական պահպանության ծառայությունը:

## ԴԱՍԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարտական խնդիրն ստանալուց հետո դասակը շար-  
վում ե վաշտի հրամանատարի ցույց տված ուղղու-  
թյամբ՝ մյուս դասակներէց առանձին: Այդ պատճառով  
հարկավոր ե, վոր նա ուղարկի իր պահպանությունը:  
Սովորաբար դասակը մարտական պահպանության մեջ  
ուղարկում ե թեթև գնդացրային ջոկ, վորը դործում ե  
իրբե գլխի դետը կամ կողքի դետը, յեթե մարտական  
պահապան ջոկն ուղարկված ե թևը:

Դետքերի աշխատանքի մասին տսված ե «Յերթա-  
յին պահպանության» գլխում:

## VI ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՃԵՐԸ


Գիշերը պահպանությունը խտանում ե, ուղարկ-  
վում են լրացուցիչ պահապան զորամասեր, տարածու-  
թյունները փոքրանում են:

Հարձակման ժամանակ բոլոր պահապան զորամա-  
սերին ազդանշան տալու համար տրվում են գույնգգույն

հրթիռներ, իսկ հակառակորդին յերևան բերելու համար՝ լուսատու հրթիռներ:

Առանձին շարժվող յուրաքանչյուր վաշտ դեպի առաջ և կողքերն ուղարկում է գետքեր 100-150 մետր հեռավորության վրա:

Դետքերի հետ կապ և պահպանվում փոքրիկ շղթաներով (վաշտից դեպի դետքը տանող մարդկանց անընդհատ շղթա, պահպանելով մարդկանց մեջ միջանցներ, վորոնք թույլ են տալիս գիշերը միմիանց տեսնելու): (Տես սխեմա 19): Այդ անհրաժեշտ և նրա հա-



Սխեմա 19. Վաշտի յերթային պահպանութունը գիշերը

մար, վորպեսզի մթնության մեջ միմիանց չկորցնեն: Դետքերի մեջ հետախուզներից պեսք է լինեն առաջնորդներ, վորոնք լավ գիտեն ճանապարհը:

Ցեթե ցերեկը դետքերը խառնվում են վաշտին, հենց վոր վաշտը բացազատվում է, գիշերը վաշտը դետքերի հետ միտաին շարժվում և ուղղակի հակառակորդի թիառաջին և նույնիսկ գլորոհը կատարվում է դետքերի պաշտպանության տակ:

Պաշտպանությամ մեջ, բացի գաղտնիներից և դետքերից մարտական պահպանությունից, յերբեմն պահպանվող զորամասերից ուղարկվում են նույնպես դորաններ: Այդ արվում է այն ժամանակ, յերբ գիշերը

հակառակորդի գրոհ և սպառնալուծ : Դարանների խնդիրն և հանկարծակի հարձակումով հակառակորդին վռնչացնել : Այդ պատճառով ել դարանները պատրաստում են ձորերում , անտառներում , մացառներում : Դարանների ուժը հասնում և մեկ ջոկից մինչև մեկ դասակի : Նրանք ամբողջ գիշերն ուղարկվում են ծածուկ կերպով և իրենք վերադառնում են նրանց նշանակված ժամին :

Գիշերը պահպանությունը շարունակ պետք և իջնջնել բարձունքներից ցած , քանի վոր գիշերը վարից վեր ուվելի տեսանելի չի :

## VII ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱՆԳԻ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌՈՒՄ

Անտառում , այնպես , ինչպես մառախուղի , փոթորկի ժամանակ կամ գիշերը , յերբ միմիայն քթիդ առաջն ես տեսնում , պահպանությունը պետք և լինի շատ խիտ : Կապը պահպանվում և փոքրիկ շղթաներով այնպես , ինչպես գիշերը : Պահպան զորամասերի գործողությունը բաց տեղանքում , վորտեղ ավելի շատ և գործադրվում զնդացիրների և հրացանների կրակը , տարբերվում և անտառի գործողությունից նրանով , վոր ալստեղ հակառակորդի մանր խմբերին ավելի հեշտ և ավելի հարվածով վռնչացնել :

Անտառը հնարավորություն և տալիս արագ կերպով վերջ տալ հակառակորդի հետախույզներին կամ մանր պահպան զորամասերին<sup>\*)</sup> :

\*) Անտառում կատարվող մարտական գործողությունների մասին ավելի մանրամասն կարելի չի կարդալ՝ Կ. Шильдбах «Боевые действия в лесах» գրքով , «Библиотека красноармейца» , изд. ГИЗ 1927 г. սերիայից :



## ԼԵՌՆԵՐՈՒՄ

Լեռներում հարձակման ժամանակ կողքի ճանապարհներ չլինելու պատճառով պահպանությունը կատարվում և անշարժ զորամասերը բարձունքներն առաջ շարժելով: Այդ բարձունքները թույլ են տալիս տեսնել հեռուն: Անշարժ պահպանության զորամասերի ծառայությունը նկարագրված և «Յերթային պահպանության» գլխում:

Լեռներում առանձնապես կարևոր և կապը պահպանության հետ, վերսկզբի հակառակորդի համար շատ հեշտ և մոտենալ և պահպանությանը կորել պահպանվող զորամասերից\*):

## ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Տափաստանները թույլ են տալի շատ հեռուն տեսնել, սակայն հակառակորդն էլ ամեն բան տեսնում և հեռվից: Բացի դրանից, հեծելազորը տափաստաններում շատ հեշտությամբ կարող և հարձակվել թե՛ թևից և թե՛ թիկունքից: Այդ պատճառով էլ տափաստաններում պահպանությունը միշտ պետք և լինի ամեն կողմից, սակայն պահպանության մասերը կարող են լինել ավելի թույլ:

## ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պահպանությունը միշտ էլ ունենալու յե մեծ նշանակություն. դա հետախուզության հետ միասին հան-

---

\*) Լեռներում կատարվող մարտական գործողությունների մասին ավելի մանրամասն կարելի չե կարդալ՝ И. Успенский «Как войска действуют в горах» գրքույնում, «Библиотека красноармейца», ГИЗ 1928 г. օրհայից:

գիտանում ե յուրաքանչյուր դորամասի աչքերը, ականջները և քիթը (հոտոտելիքը) :

Պահպանության շնորհիվ մենք միշտ կարող ենք առաջուց իմանալ վտանգը, հակառակորդից վորևեքան լսել, հոտոտել և նրա մոտ վորևեքան տեսնել :

Բացի դրանից այդ պահպանությունը հանդիսանում ե նաև մարդու ձեռքերից մեկը, վորը կոչում առաջ են պարզում հակառակորդի հարվածին հակահարված տալու համար :

Պահպանությունը կանգ ե առնել տալիս հակառակորդին հակահարված ե հասցնում նրա հարվածին և ժամանակ ե տալիս մեր դլխավոր ուժերին խփելու նրա ամենադժայուն տեղերին :

Յուրաքանչյուր մարտիկ պետք ե ուսումնասիրի պահպանության ծառայությունը և իր հինգ մատի պես դիտենա այդ ծառայությունը :

-----


## ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                             |    |
|-----------------------------------------------------------------------------|----|
| I. Ի՞նչ է ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ . . . . .                                          | 3  |
| Ասք և անցարան . . . . .                                                     | 5  |
| II. ՅԵՐԹԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ . . . . .                                        | 6  |
| III. ՅԵՐԹԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՄԱՍՆԵՐԻ<br>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ . . . . .           | 8  |
| Գլխի ջոկատ (գումարտակ) . . . . .                                            | 8  |
| Կողքի ջոկատը (գումարտակը) հարձակողա-<br>կան յերթի ժամանակ . . . . .         | 17 |
| Կողքի ջոկատը (գումարտակը) թեվային յեր-<br>թի ժամանակ . . . . .              | 19 |
| Գումարտակը թիկունքի ջոկատում նահանջո-<br>ղական յերթի ժամանակ . . . . .      | 23 |
| Առանձին գործող գումարտակի պահպանու-<br>թյունը . . . . .                     | 29 |
| Վաշտը—գլխի ջոկատ . . . . .                                                  | 29 |
| Վաշտը—գլխի և թիկունքի յերթային ուղեկալ .                                    | 30 |
| Առանձին գործող վաշտի պահպանությունը .                                       | 31 |
| Գլխի յերթային ուղեկալը (դասակը) հակընդ-<br>դեմ մարտում . . . . .            | 33 |
| Կողքի յերթային ուղեկալը հարձակողական և<br>թեվային շարժման ժամանակ . . . . . | 33 |

|                                          |    |
|------------------------------------------|----|
| Թիկունքի ուղեկալը հարձակողական և նա-     |    |
| հանջողական շարժման ժամանակ . . . . .     | 35 |
| Առանձին շարժվող դասակի պահպանութիւնը     | 37 |
| Զոկը յերթային պահպանութեան մեջ (դես-     |    |
| քեր) . . . . .                           | 40 |
| Դիտակալների աշխատանքը . . . . .          | 46 |
| IV. ԱՆՇԱՐԺ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ . . . . .       | 49 |
| Պահապան ջակառ (գումարտակ) . . . . .      | 50 |
| Առանձին գործող գումարտակի անշարժ պահ-    |    |
| պանութիւնը . . . . .                     | 53 |
| Պահապան վաշտ . . . . .                   | 54 |
| Առանձին գործող վաշտի անշարժ պահպանու-    |    |
| թիւնը . . . . .                          | 54 |
| Պահապան ուղեկալ (դասակ) . համարավոր ու   |    |
| ղեկալներ . . . . .                       | 55 |
| Առանձին պահապան ուղեկալ . . . . .        | 56 |
| Առանձին գործող դասակի անշարժ պահպա-      |    |
| նութիւնը . . . . .                       | 57 |
| Դաշտային պահակ (հրաձգային ջոկ) . . . . . | 57 |
| Պահապան պոստի ծառայութիւնը . . . . .     | 60 |
| Դադարեցման . . . . .                     | 63 |
| Պարեկ՝ տեղումքը գնմելու համար . . . . .  | 64 |
| Պարեկ՝ հարեւան ուղեկալների հետ կապ       |    |
| պահպանելու համար . . . . .               | 65 |
| Պարեկ՝ դաշտային պահակների զգոնութիւնն    |    |
| ստուգելու համար . . . . .                | 65 |
| V. ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ . . . . .      | 66 |



|                                                                                       |    |
|---------------------------------------------------------------------------------------|----|
| Ի՞նչ է մարտական պահպանությունը . . .                                                  | 66 |
| Գումարտակի մարտական պահպանությունը . . .                                              | 68 |
| Վաշտի մարտական պահպանությունը . . .                                                   | 70 |
| Դասակի մարտական պահպանությունը . . .                                                  | 72 |
| VI. ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԻՇԵՐԸ . . .                                                        | 72 |
| VII. ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ-<br>ՆԵՐԸ ՏԵՂԱՆՔԻ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՅՄԱՆՆԵ-<br>ՐՈՒՄ . . . | 74 |
| Անտառում . . .                                                                        | 74 |
| Լեռներում . . .                                                                       | 75 |
| Տափաստաններում . . .                                                                  | 75 |
| Յեղրակացություն . . .                                                                 | 75 |





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039053

(164)

1.

85 6

9176 15 407.

A  $\frac{I}{4444}$